

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Շենրիկ Ազիզեան

Մփիւքում լոյս տեսնող հայկական պարբերականները կարելուք գործօններ են հայապահպանման ասպարէզում: Հայկական պարբերականները, անկախ իրենց որդեգրած ուղեգծից նպաստել են հայ գիր ու գրականութեան տարածմանը:

Մամուլն իր ուրոյն դերն է ունեցել նաեւ իրանահայ ազգային կեանքի մէջ: Անհնարին է իրանահայ կեանքի պատմութիւնը ուսումնասիրել առանց նկատի առնելու տարբեր ժամանակահատուածներում զարուքում լոյս տեսած մամուլը:

Իրանահայ լրագրութեան պատմութիւնը սկիզբ է առել 19-րդ դարի վերջին տասնամեակում, երբ 1894 թ. Թեհրանում հրատարակեց իրանահայ առաջին «Շաւիղ» շաբաթաթերթը, որից յետոյ լոյս ընծայեցին զանազան պարբերականներ: 1894-ից մինչ այժմ մտատարապէս 85 անուն պարբերականներ են լոյս տեսել:

Համայնքի յետամնացութիւնը մի կողմից, թոյլ չեն տւել իրանահայ մամուլը գոյատեւի ու զարգանայ, սակայն երբ գոյութիւն են ունեցել քիչ թէ շատ նպաստատու պայմաններ իրանահայ մամուլը վերընթացք է ունեցել ու մեծ ազդեցութիւն է թողել համայնքի վրայ եւ միաւորելով համայնքը՝ հետապնդել է նրա իրաւունքների ու պահանջների իրականացումը:

Իրանահայ մամուլը իր պատմութեան ընթացքում կամուրջ է հանդիսացել հայրենիքի եւ համայնքի միջեւ, այդպիսով նոր սերնդին ծանօթացրել է իր պապեցական հայրենիքի հետ ու հայրենասիրական զգացումներ արթնացնելով համայնքում լուրեր է փոխանցել հայրենիքի քաղաքական-հասարակական կեանքից:

Իրանահայ մամուլը մեծ մասամբ պաշտպանել է հայ-իրանական ասանդական կապերը եւ համագործակցել է երկրի ողջամիտ այն ուժերի հետ, որոնք իրենց մասնակցութիւնն են բերել 1905-1911 թթ. սահմանադրական յեղափոխութեանը 1940-1950 թթ. դեմոկրատիկ շարժմանը եւ 1979 թ. յեղափոխութեանը: Այժմ ատելի մեծ է իրանահայ մամուլի դերը: Իրանի ներկայ հասարակական կեանքը, զգացնել է տալիս, որ մամուլի միջոցով հրապարակելի այն եւ մտքերի փոխանակման առիթ ստեղծի հայ եւ պարսիկ մտատրականութեան միջեւ:

Արտայայտելու ազատութիւնը, որ այժմ իրա-նական մամուլի կողմից մի սկզբունք է, դեռեւս այնպէս որ հարկ է՝ իրանահայ մամուլում չի կիրառում: Նրանց էջերում քիչ են գտնուում այնպիսի յօդածներ, որ համապատասխանեն ներկայ պահանջներին:

Այդ բացը լրացնելու համար առաջարկում է, որ իրանահայ մամուլն իր որդեգրած ուղեգծում հետապնդի հետեւեալ նպատակները.

1. Նպաստի հայապահպանմանը:
2. Նպաստի սփիւք-հայրենիքի կապերի ամրապնդմանը:
3. Հետապնդի համայնքի կրթական, կրօնական, մշակութային խնդիրների լուծումը:
3. Պաշտպանի ու հետապնդի Հայ Դատի արդարացի լուծումը:
4. Նպաստի հայ-պարսիկ ժողովրդների դարաւոր ասանդական կապերին:

Մենք իրականում քաղաքական ու հասարակական նոր պայմաններում ենք գտնուում եւ այդ պայմաններում աշխատելու փորձ չունենք եւ ինքներս չպէտք է սահմանափակենք մեր նոր մօտեցումները: Իրանահայ մամուլի հիմնական խնդիրներից մէկը նոր կարգավիճակի ստեղծումն է, որի հիման վրայ մամուլը պիտի ունենայ նոր բովանդակութիւն եւ ընդլայնի իր գործունէութեան սահմանները:

Նոր պայմաններում, խիստ կարելուք է գտնել մարդկանց հետ աշխատելու նոր ուղիներ, նոր ձեւեր ու մեթոդներ: Այսօր երբ քաղաքական որոշ ուժեր հանդէս են գալիս ծայրահեղ դիրքերից, լուսագոյն պրոպագանդն չափաւոր անաչառ, հանգամանալից, լուրեր հաղորդելն է, որն իր մէջ կը պարունակի ճշմարտութիւն՝ նոր քաղաքականութեան մասին, եւ համայնքին խոր ճգնաժամից դուրս բերելու իրական ուղիների մասին:

Մենք պէտք է կարողանանք ճանաչել մեր դրական եւ բացասական կողմերը: Դեմոկրատիան, ոչ թէ անեմաթողութիւն է, այլ ճշմարիտ քաղաքացիական, պատասխանատուութեամբ շնչող լուրջ ու համարձակ խօսք: Դեմոկրատիան պաշտպանելը ոչ թէ թեթեւացնում է մամուլի պարտականութիւնը, այլ բարձրացնում է նրա պատասխանատուութիւնը ընթերցողի առջեւ՝ մեծապէս օգնում է նրան լինել սկզբունքային եւ ազատամիտ: Դեմոկրատական սկզբունքները ատելի մեծ ազատութիւն եւ ինքնուրոյնութիւն կը բերի տեալ մամուլի խմբագրութեանը: Մենք պէտք է ատելի քիչ վիճենք տարբեր գաղափարների մտքը եւ ատելի շատ խորհենք համայնքի խնդիրների գործնական լուծման մասին, հարկաւոր է մամուլի էջերում ընթերցողներին հրաւիրել համայնքի կենսական խնդիրները լուծելու եւ պահպանելու ազգային լեզուն, մշակոյթը, ասանդները՝ նոր մօտեցումներով:

Ատելի շատ աշխատանք, ատելի քիչ ընդհանուր դատողութիւններ, այդպիսին պէտք է լինի այսօրայ մամուլը: Այստեղ մամուլն իր հնարաւորութիւններով պիտի առաջնորդի իր ընկալումներով՝ ունենալով այնպիսի լծակներ, ինչպիսին են քննադատութիւնը,

հրապարակայնությունը եւ լաւագոյն փորձի պրոպագանդանը: Ինքը՝ քննադատութիւնը պատասխանատւութիւն է. որքան այն աւելի սուր է, այնքան պատասխանատու պէտք է լինի, քանի որ այս կամ այն յօդածը ոչ թէ անձնական ինքնաարտայայտում, կամ սեփական հաւակնութիւնների արտացոլում, այլ հասարակական գործ է: Քննադատելով՝ մամուլը պէտք է խթան հանդիսանայ լուրջ խորհրդակցութիւնների՝ քաղաքական ուժերի միջեւ: Մամուլում առաւել տեղին է երկխօսութիւնը եւ միանգամայն անընդունելի են ամէն կարգի ներդրամիտ յորդորումները խրատաբանութեան եւ առաւել եւս դատախազական տոն: Ոչ ոք վերջին ատենանի ճշմարտութեան արտայայտելու արտօնութիւն չունի, մամուլը պէտք է արտայայտի ժողովրդի կարծիքը: Ուրիշ կերպ մտածելն ու գործելը կը լինի ոչ դեմոկրատական, կարճ ասած քննադատութիւնը կարող է միասնականութեան համար բացառիկ արդիւնաւետ գործ լինի միայն այն ժամանակ, երբ հիմքում լիակատար ճշմարտութիւն լինի:

Ամէն մի կողմնակալութիւն, քննադատութիւն, ամէն մի անճշտութիւն վնասում է միասնականութեանը: Ժամանակի ընթացքում քննադատութեան նորմերը փոխում են, բայց միշտ պէտք է լինեն ճշմարտութեան հիման վրայ: Մամուլում դադարեցնել քննադատական ընթացքը, նշանակում է կանգնեցնել առաջընթաց շարժումը: Մենք ինչպէ՞ս կապրենք, եթէ քննադատութեան միջոցով քննադատութեանը մասնակցելու միջոցով, յատկապէս ներքեւից արտոյ քննադատութեան միջոցով չգարգացնենք մեր քաղաքականութիւնը, չպայքարենք բացասական երեւոյթների դէմ, չկանխենք այդ երեւոյթները, մի խօսքով դեմոկրատիան ծնունդ է առնում քննադատութիւնից:

Արդեօք տարբեր գաղափարներ ներկայացնող հոսանքները ունե՞ն այնպիսի երաշխիքներ, որ անցեալի սխալները վերստին չկրկնենք, եւ մենք կը կարողանա՞նք ապահովել մեր հասարակութեան զարգացումը: Այդպիսի երաշխիք կարող է լինել համայնքի տարբեր հոսանքների միասնական կամքը եւ նրանց պատասխանատւութեան գիտակցութիւնը: Երաշխիք կը հանդիսանայ նաեւ ժողովրդի բերած ռեալ աշխոյժ մասնակցութիւնը ազգային կեանքում: Մամուլը այդ հարցում կարող է մեծ դեր ունենալ:

Վերջին հաշուով մամուլը կարող է հանրային կեանք ստեղծել՝ կրթական, կրօնական եւ մշակութային եւ այլ խնդիրների ասպարէզում, ինչը երկխօսութեան նիւթ կը դառնայ տարբեր տեսակետներ ունեցող անձանց ու խմբակցութիւնների միջեւ՝ որոնք շահագրգռած են համայնքի ճակատագրական խնդիրների լուծման դրական արդիւնքով: ■



ՇԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Միրելի հայրենակից՝

Ուրախութեամբ տեղեկացնում ենք, որ Իրանի Ներքին Գործոց Նախարարութիւնը հաստատելով Թեհրանի Հայոց Թեմի 12-րդ Պատգամատրական Ժողովի կենտրոնական ընտրական յանձնախմբի կազմած ժամանակացոյցը եւ առաջարկած պայմանները իր վերջնական համաձայնութիւնն է տւել Թեհրանի Հայոց Թեմի 12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւնների կայացման համար:

Առ այդ մեր համայնքի ուշադրութեանն ենք յանձնում, որ կենտրոնական ընտրական յանձնախմբի որոշումով ընտրութիւնները կայանալու են *ուրբաթ հոկտեմբեր 20, 2000 թ.-ին:*

Հետեւեցէք մեր միւս հաղորդագրութիւններին:

**Թ. Շ. Թ. 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՌՈՒԱԿԱՆ
ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ**

**ԱՏԵՆԱՊԵՏ՝
Թ. ԹՈՎԱՍԱՏԵԱՆՑ**

**ԱՏԵՆԱԴՊԻՐ՝
Ս. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ**

Ճանաչենք մեր լաւագոյն աշակերտներին



Զեփիւռ Նաւասարդեան
«Թունեան» դպրոց
Բ դասարան



Դոնարա Խողաբախչեան
«Թունեան» դպրոց
Բ դասարան

Է՞ն՞ Կ՞ Դ՞ Ը՞ Ը՞ Ը՞ Ը՞

33-րդ համահայկական խաղերի բացումը կատարեց.՝ Սոյն թականի սեպտեմբերի 6-ին Թեհրանի «Արարատ» մարզադաշտում տեղի ունեցավ 33-րդ համահայկական խաղերի բացման արարողությունը:

Բացման արարողութեանը ներկայ էին պետական այրեր, Իրանի «Մարմնակրթական» նախարարութեան ներկայացուցիչներ, ՀՀ լիազոր դեսպանը եւ նոյն դեսպանութեան անձնակազմը, Թեմի Առաջնորդի տեղապահը, Իրանի խորհրդարանի հայ գոյգ պատգամաւորները, մամուլը եւ բազմահազար իրանահայեր:

Հանդիպում՝ «Հայ Համալսարանական» միութիւնում.՝ Սոյն թականի օգոստոսի 25-ին «Հայ Համալսարանական» միութեան կենտրոնատեղիում, նոյն միութեան հրատարակ տեղի ունեցավ ժողովրդական հանդիպում՝ 12-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնների հետ կապած հարցերի շօշափման նպատակով: Հանդիպմանը ներկայ էին Թեհրանի Թեմական Խորհրդի ներկայացուցիչ՝ պրն. Ռուբիկ Կարապետեանը, Կենտրոնական Ընտրական Ցանձնախմբի նախագահ՝ պրն. Թոմիկ Սարոյխանեանը եւ Ս. Սարգիս եկեղեցու տարածաշրջանի ենթայանձնախմբի անդամները: Ցաւօք ներկայների թիւը 20 հոգուց չէր անցնում, ինչը մտահոգութեան առիթ էր տալիս:

Հ.Հ. միութեան նախագահ՝ պրն. Էդիկ Ղահրամանեանն իր բացման խօսքից յետոյ, բնւ հրաւիրեց պրն. Թոմիկ Սարոյխանեանին: Կենտրոնական Ընտրական Ցանձնախմբի նախագահը խօսեց իր ղեկավարած յանձնախմբի կողմից կատարած աշխատանքների մասին: Նա կարելու էր թեմի Պատգամաւորական ժողովի ընտրութեան հարցը, իր կողմից յայտնեց, որ մեր համայնքի այսօրուայ հիմնական հարցը ժողովրդի մասնակցելն է այդ ընտրութիւններին:

Թեմական Խորհրդի ներկայացուցիչ՝ պրն.Ռ. Կարապետեանը նոյնպէս իր հերթին դժգոհութիւն յայտնեց՝ չնայած սոյն միութեան անդամները մեր համայնքի գիտակից եւ մըտաւորական խաւից են, այնուամենայնիւ:

նայնիւ հանդիպմանը այնքան քիչ քով են մասնակցել:

Այնուհետեւ ներկայները իրենց հարցերը արծարծեցին, որոնք բխում էին մի շարք մտահոգութիւններից: Օրինակ՝ ժողովուրդը նոյնիսկ չի ճանաչում իր թաղի պատգամաւորներին եւ հէնց նման երեւոյթներ պատճառ են հանդիսանում՝ անտարբերութեան: Արդեօք Պատգամաւորական ժողովի կամ Թեմական Խորհրդի հաշիւտութիւնը կը նպաստի՞ ընտրութիւններին, թէ՞ կը վնասի: Պրն. Կարապետեանը չպատասխանեց նմանատիպ հարցերին, միայն ասաց թէ այնուամենայնիւ Թեմական Խորհուրդը իր հաշիւտութիւնը կը ներկայացնի Պատգամաւորական ժողովին:

Հարց եղաւ, որ կանոնադրութեան մէջ նշած է, որ պէտք է կեանքի կոչւեն որոշ մարմիններ, բայց մեծ մասամբ կամ դրանք կեանքի չեն կոչւել կամ էլ եթէ կեանքի են կոչւել չեն աշխատել կամ լուծարքի են ենթարկւել, օրինակ՝ մշակութային մարմինը: Այն հարցին, թէ արդեօք մի հասարակական միաւորման մէջ կարող ե՞ն լինել ընդդիմոյի ուժեր: Պրն. Ռ. Կարապետեանը տուեց հետեւեալ պատասխանը. «Ընդդիմադիրը բարդ բան է, որովհետեւ ինչի դէմ է դիմադրութիւն ցոյց տալիս, այլախոհի թէ՞ հակառակորդի: Հակառակորդը ատելի յըստակ բան է, հակառակ է, բայց ընդդիմադիրը դիմադրութիւն է ցոյց տալիս: Այլախոհը շատ դրական երեւոյթ է, եթէ որեւէ համայնքում տարբեր աշխատանքներ, տարբեր խնդիրներ չլինի, առողջ մթնոլորտ չի լինի»:

Հարց եղաւ, որ միութիւններում եղած ժողովրդական հաւաքներում 12-րդ ՊԺ-ի ընտրութիւնների կապակցութեամբ թաղերի պատգամաւորները ինչո՞ւ չեն մասնակցում: Այս հարցին պատասխանեցին, որ եթէ հրաւիրեն՝ կը մասնակցեն: Բայց նշեց, որ Մաջիդիէ թաղամասում հրաւիրած են եղել պատգամաւորները եւ նրանցից նոյնիսկ մէկ հոգի չի մասնակցել այդ հաւաքին: Այդ հանգամանքը բացատրեց նրանով, որ կարող է այդ հանդիպումներին մասնակցելը նկատուի անտղակի քարոզչական նպատակ:

Հանդիպում «Բա.Ֆ.Ֆ» մարզահամալիրում.՝ Սոյն թականի օգոստոսի 30-ին 12-րդ ՊԺ-ի ընտրութիւն-

ների հետ կապւած ժողովրդական հանրահաւաք տեղի ունեցաւ «Բա.Ֆ.Ֆ» մարզահամալիրում: Սկզբում որոշ տեղեկութիւններ փոխանցեց Թեհրանի Թեմական Խորհրդի եւ ԿԸՅ-ի ներկայացուցիչների կողմից, յետոյ տեղի ունեցան ելոյթներ ու հարց ու պատասխաններ:

Է՞ն՞ Կ՞

ՀՀ Էներգետիկայի նախարարը Թեհրանում.՝ Սոյն թականի օգոստոսի 29-ին, Ի. Ի. Հ. Էներգետիկայի նախարարի հրատարակ տեղի ունեցավ Հ. Հ. Էներգետիկայի նախարար՝ պրն. Կարէն Գալստեանը:



Պրն. Կարէն Գալստեանը հանդիպումներ ունեցաւ Իրան Ի. Հանրապետութեան նախագահի առաջին օգնական՝ Հաքիբիի, Իրանի արտգործնախարար՝ պրն. Խառազիի, Իրանի նախնախարարի եւ փոխարտգործնախարար՝ Աղեյիի, եւ մի շարք պատասխանատու անձանց հետ:

Հանդիպման ընթացքում քննարկուել են Իրան-Հայաստան գազամուղի կառուցելու, Մեղրիում նախագտման կենտրոն հիմնելու, Մեղրիի շրջանում հիդրօէլեկտրակայան հիմնելու եւ երկու երկրներին հետաքրքրող այլ հարցեր:

«Լոյս»-ը հարցազրոյց է վարել յարգելի պրն. Կարէն Գալստեանի հետ, որը կը հրատարակի թերթի յաջորդ համարում:

Ծ՞Յ Թ՞ ըի՞ Յ Կ՞

Աղանդագործութիւնը Հայաստանում ծաղկող ոլորտներից մէկն է (Ազգ օրաթերթ 24.06.00).՝ Մօտ երկու տարի առաջ հիմնուած, միջազգային չափանիշներով կառուցուած բրիտանական DCA աղանդի գործարանը այսօր դարձել է ամենախոշոր հարկատուներից մէկը Հայաստանում, եւ որի արտադրանքը 100 տոկոսով արտահանուած է:

Պարսկական քնարերգության երեկոյ (ՀՀ օրաթերթ 21.06.00).- Հայաստանի հանրապետությունում Իրանի Իսլամական հանրապետու-



թեան դեսպանութեան մշակոյթի կենտրոնում պարսկական քնարերգութեան երեկոն նախաձեռնել էր դեսպանութեան հովանաւորութեամբ, գործող պարսկերէնի ազատ դասընթացների կազմակերպիչ՝ Նուրո Առաքելեանը:

Իրանի դեսպանի ներածական խօսքից յետոյ ուսանողների խանդավառ կատարումներով բնագրով հնչեցին իրանական դասական եւ ժամանակակից բանաստեղծների՝ Սաադիի, Հաֆեզի, Խայամի, Օրիւմի, Խոմէյնու, Ֆարուք Ֆարուքի, Սոհրաբ Մեփեհերու եւ այլոց ստեղծագործութիւնները:

ՀՀ վարչապետի գլխատրած պատմիրակութիւնը մասնակցեց Արցախի անկախութեան հռչակման տօնակատարութիւններին (ԵՐԵՒԱՆ ՆՈՅԵԱՆ ՏՄՊԱՆ).- Մեպտեմբերի առաջին երեք օրերում, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի գլխատրութեամբ, մի պատմիրակութիւն աշխատանքային այցելութիւն ունեցաւ Լեռնային Ղարաբաղ:

Այդ ընթացքում վարչապետը մասնակցեց նաեւ 2 սեպ. ԼՂՀ անկախութեան հռչակման օրւան նիւրած տօնակատարութիւններին, ինչպէս նաեւ ներկայ գտնեց Շուշիի մէջ Վազգէն Մարգարեանի յուշարձանի բացման արարողութեան:

Սեպ. 2-ի երեկոյեան վարչապետի գլխատրած պատմիրակութիւնը մասնակցեց ԼՂՀ խորհրդարանի մէջ տեղի ունեցած Անկախութեան օրւան նիւրած ընդունելութեան:

Ինչպէս նախատեսել էր, զոյգ երկրների կառավարութիւնների միջեւ ստորագրուեց գործակցութեան մի համաձայնագիր:

Անգլիայում ՀՀ դեսպանը ետ է կանչուում.-(Հայկական ժամանակ օրաթերթ 20.06.00): ՀՀ նախագահի մամուլ խօսնակ Վ. Գաբրիէլեանը ի պատասխան լրագրողների առաջադրած հարցի, ասաց, թէ Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան Արմէն Սարգսեանին ետ կանչելը ամենեւին էլ Քոչարեանի անձնական վրէժխրդրութեան նշան չէ: Ըստ խօսնակի, պարզապէս Քոչարեանը նպատակաւարմար չի համարում, որ դեսպաններն այդքան երկար մնում են ուրիշ երկրում, քանզի այդ մարդիկ կարում են սեփական երկրից: Իսկ որպէսզի լրագրողներն այլ մեկնաբանութիւններ չանեն, մինչեւ տարեվերջ ետ կը կանչեն նաեւ մի քանի այլ դեսպաններ, որոնք օտար փերում շատ երկար մնացին կտրելով հայրենի հող ու ջրից: Թէ ովքե՞ր են լինելու այդ դեսպանները, այս պահին դժուար է ասել:

ԱՄՆ-ի հայ գաղութի պատմութիւնը» գիրքը (ՀՀ օրաթերթ 21.06.00).- «Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային ակադեմիայի պատմութեան ինստիտուտի» վերջին տարիների ուշահարոյց հրատարակումների թում աչքի է ընկնում պատմական գիտութիւնների թեկնածու՝ Քնարիկ Աւագեանի «Ամերիկայի Միացեալ Նահանգների հայ գաղութի պատմութիւնը» աշխատութիւնը:

Արդեօքանու Իրանի նախկին եւ ներկայ դեսպանները Հայաստանի մասին.-(Ազգ օրաթերթ 15.06.00): Դեսպան Նահաւանդեան.-«... Թուրքիան Ղարաբաղի հարցում երեք շահ է հետապնդում: Առաջին՝ բարձրացնել իր հեղինակութիւնն Արդեօքանում եւ ճամփայ հարթել դէպի կենտրոնական Ասիա: Երկրորդ՝ հայթորքական դարաւոր թշնամանքը մոռացնել տալ եւ երրորդ՝ տարածաշրջանում կատարել Արեւմուտքի կողմից իր վրայ դրած պարտականութիւնները»: Դեսպան Ալիոեզա Բիզդեյի.-«Անհրաժեշտ է հայ-իրանական յարաբերութիւնները դիտարկել հետեւեալ երեք փաստարկների լոյսի ներքոյ. ա) Մահմեդական Իրանի եւ քրիստոնէայ Հայաստանի յարաբերութիւններն ապացոյցն են, որ մահմեդականներն ու ոչ մահմեդականները կարող են պահպանել բա-

րիդրացիական յարաբերութիւններ. բ) Հայաստանը տարածաշրջանի պետութիւններից է եւ Իրանի հարեւանը. գ) Թեհրան-Երեւան յարաբերութիւններն ուղղած չեն երրորդ երկրի դէմ»:

7 ամեայ Նառան Հայաստան է բերել միջազգային մրցոյթի 7 մրցանակներից 4-ը (Հայկական ժամանակ օրաթերթ 27.06.00).- Լիտւայի



մշակոյթի նախարարութեան կազմակերպած Բալիօ Դարիոնասի անուան դաշնակահարների միջազգային մրցոյթում յաղթել է 7 ամեայ Նառա Աւետիսեանը: Այդտեղ մասնակցել էին 50 երեխաներ, 17 երկրներից:

Հոկտեմբերի 27-ի համար զինդատախազութիւնը պէտք է հրապարակային պարզաբանումներ տայ հասարակութեանը (Հայոց Աշխարհ օրաթերթ 23.06.00).- Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազէյեանը լրագրողների հարցերին տել է հետեւեալ պարզաբանումները՝ «Ցաւալի է, որ հասարակութեան եւ քաղաքական որոշ շրջանների ուշադրութիւնը երբեմն աւելի շատ ուղղում է ոչ թէ բուն հանցագործութեան բացայայտման անհրաժեշտութեանը, այլ դէպի ծանրագոյն հանցագործութիւն կատարած մարդկանց որոշ իրաւունքների պաշտպանութեան խնդիրները: Մինչդեռ հանցագործութեան բացայայտումն անհրաժեշտ է, որպէսզի նորմալ իրավիճակի գանք:

Բոլորս տեղեակ ենք մեր քննչական, իրաւապահ մարմինների պրակտիկային դեռեւս սովետական շրջանից: Այսօր աղմուկ է բարձրացում, թէ Նայիրի Յունանեանին ծեծել են: Կը ծեծեն էլ, կը պատժեն էլ: Նա ապրելու իրաւունք չունի: Նա գրկել է մարդկանց ապրելու իրաւունքից:

Հատածներ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ասուլիսից.-(ՀՀ օրաթերթ 27.06.00).- Վեհափառը նը-

շեց, որ Մայր Աթոռում կան 43 միաբաններ՝ 7 եպիսկոպոս և արքեպիսկոպոս, 15 վարդապետ և արեղայ, 21 սարկաւագ: Ժողովականներին է ներկայացւել նաեւ վարչատնտեսական զեկոյց՝ թեմական առաջնորդական տեղապահների նշանակումներին, ուսումնառութեան ուղարկւած եկեղեցականներին, եկեղեցիների բացման ու նորոգման անդրադարձներով: Կրթական ոլորտում ներկայացւել է Գեորգեան հոգեւոր դպրանոցի կեանքը, ուր ուսանում են 107 ուսանողներ, Մեանի դպրանոցը՝ 48 ուսանողներով, Գիւմրիի ընծայարանը՝ 36 ուսանողներով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինութեան տակ գործում է նաեւ Կալկաթայի մարդասիրական ճեմարանը, ուր անցնող տարում Հայաստանից 24 երեխաներ են ուղարկւել: Ներկայացւել է նաեւ «Շողակաթ» ստույգի աշխատանքը՝ հրատարակչական, տեղեկատուական, հասարակական-մշակութային գործունեութիւնը:

Մեղրիում անելացել է ամուսնութիւնների թիւը (ՀՀ օրաթերթ 22.08.00).- Մեղրիի վիճակավարչութեան տեղակերպով, 2000 թ. առաջին կիսամեակում տարածաշրջանում գրանցւել է 27 ամուսնութիւն եւ 1 ամուսնալուծութիւն (նախորդ տարւայ նոյն ժամանակահատուածում՝ 21 ամուսնութիւն եւ 2 ամուսնալուծութիւն): Պակասել է ծնելիութիւնը՝ նախորդ տարւայ 73-ի դիմաց գրանցւել է 63 ծնունդ:

ՕՒԷԶ²1/4 **ՉՍԱԷՍ**

Կլիմտոնը նոր ռեկորդ սահմանեց (Հայաթէ Նօ օրաթերթ 20.09.00).- Բիլ Կլիմտոնը մինչ այժմ 159 արտասահմանեան ճամբորդութիւն է ունեցել, որոնց ծախսը կազմել է նազազոյնը 292 միլիոն դոլար: Նրա ճամբորդութիւնների թիւը գերազանցել է իր բոլոր նախորդների ճամբորդութիւնների թից:

Մէկ տարւայ ընթացքում 31 հազար ճապոնացիներ ինքնասպանութիւն են գործել, (Բահար օրաթերթ 04.07.00).- Վերոյիշեալ տեղակերպը ներկայացրել է ճապոնիայի «Առողջապահութեան եւ բարոութեան» նախարարութիւնը:

Կալիֆորնիայի սենատը վաւերացրեց ցեղասպանութեան գոհերի փոխհատուցման օրինագիծը (Ազգ օրաթերթ 26.08.00).- ՍԱԿԲԱՄԵՆՏՕ, ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: «Ասպարեզ» թերթի հաղորդմամբ, Կալիֆորնիա նահանգի սենատորներ՝ դեմոկրատական Ադամ Շիֆի (Բրքերնք) եւ Չակ Փուշկեանի (Ֆրեզնօ) յորդորանքով 1915 թ.-ի Հայոց ցեղասպանութեան զոհերի ապահովագրական պահանջների եւ հատուցման պաշտպանութեան օրինագիծն ուղարկւել է Նահանգապետին՝ այն հաստատելու համար: Օրինագիծը միաձայն վաւերացւել է Կալիֆորնիայի նահանգային սենատում՝ 39 կողմ եւ ոչ մի դէմ ձայնով:

Մենատի «1915 թ.-ի օրինագիծը» (SB-1915) իրաւունք է տալիս հայոց ցեղասպանութեան զոհերին ու նրանց ժառանգներին Կալիֆորնիայի ապահովագրական ընկերութիւններին հարկադրել վճարելու այն գումարները, որոնք նրանք պարտք են ցեղասպանութեան զոհերին: Թուրքիայում գործած ամերիկեան ապահովագրական ընկերութիւններում հայերն իրենց գոյքն ապահովագրել են 1890-1915 թթ.-ի ընթացքում: Ադամ Շիֆը սենատում միացեալ աջակցութեան կոչ է արել ու նշել ցեղասպանութեան զոհերի ժառանգներին տրելիք հնարաւորութեան կարեւորութիւնը: «Կալիֆորնիա նահանգում բնակող ցեղասպանութիւնից վերապրած հազարատոը մարդիկ ու նրանց ժառանգները մինչ օրս զրուկրւած էին իրենց պայմանագրային իրաւունքից», յայտարարել է Շիֆը: Փուշկեանն իր հերթին նշել է, որ «այս օրինագիծը Հայոց ցեղասպանութեան ճանաչումն է Կալիֆորնիա նահանգի կողմից եւ օրինագիծով կը յաղթահարուեն նրանց արդար պահանջների կատարման արգելքները»:

Կը ստեղծի հայկական դպրոց (ՀՀ օրաթերթ 25.08.00).- Միացեալ Նահանգներում կը կառուցուի առաջին հայկական դպրոցը, որը կը պատկանի ոչ թէ որեւէ կոնկրետ անձի կամ կազմակերպութեան, այլ ամբողջ հայկական սփիւռքին ամբողջութեամբ վերցրած: Շինարարութիւնը մտադիր է Ֆինանսաւորել խոշոր ամերիկեան ձեռներէցներ եւ հողատէրեր Բերտա եւ

Ջոն Կարապետեանների հիմնադրամը, որոնք այդ նպատակների համար փոխանցել են 150 հազար դոլար:

Նախիջեանը 42 մլն. դոլար է պարտք Իրանին (ՀՀ օրաթերթ 22.08.00).-Նախիջեանը 42 մլն. դոլար է պարտք Իրանին վերջին 3 տարում մատակարարւած էլեկտրաէներգիայի դիմաց,- յայտնել է Արքրեջանում Իրանի դեսպանատունը: Օգոստոսի 21-ին տարածւած հաղորդագրութեան համաձայն, աղքեթջանական եւ իրանական ընկերութիւնները դեռեւս 1994 թականին պայմանաւորել էին, որ Իրանը էլեկտրականութիւն կը մատակարարի Նախիջեանին դիզելային վառելիքի դիմաց: Ըստ «Ազատութիւն» ռադիօկայանի, այդ պայմանաւորաւծութիւնը կատարւել է մինչեւ 1997 թականը, սակայն վերջին 3 տարում 42 մլն. դոլարի պարտք է կուտակւել: Իրանական կողմը զգուշացրել է Նախիջեանի իշխանութիւններին, որ եթէ 2 շաբաթում միջոցներ չձեռնարկուեն պարտքը դիզվառելիքով մարելու ուղղութեամբ- ապա էլեկտրականութեան մատակարարումը կը դադարեցուի:

Թուրքերը բողոքում են (ՀՀ օրաթերթ 22.08.00).- «Ազատութիւն» ռադիօկայանի հաղորդման համաձայն, թուրքերը 380 հազար ստորագրութիւն են ներկայացրել հոլանդական Աստեն քաղաքի իշխանութիւններին՝ բողոքելով Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը յատկապէս յուշակոթող յուշարար տեղադրելու մտադրութեան դէմ: Ըստ Նիդերլանդների մամուլի, Աստենի իշխանութիւնները յուշաքարի տեղադրման թոյլտութիւնը պայմանաւորել էին հասարակական արձագանքով, որից յետոյ միայն Հոլանդիայի թուրքական համայնքը 200 հազար ստորագրութիւն է հաւաքել յուշարձանի բացման դէմ: Եւս 180 հազար բացասական արձագանք ստացւել է Աւրստրալիայում բնակող թուրքերից: Աստենի քաղաքապետարանը յայտնել է, որ թուրքերից, ինչպէս նաեւ հայերից ստացւած արձագանքները քննարկւելու են յատուկ յանձնաժողովում, որից յետոյ կը կայացուի, որը սակայն նոյնպէս կարող է բողոքարկւել դատարանի միջոցով: ■

11. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ

30ԴԻԱԾ 70

Թեմի ընդհանուր տնտեսական վիճակը բարելաւելու, ազգապատկան կալւածները լրացոյցն օգտագործելու եւ թեմի նիւթական կարիքները հոգալու նպատակով հասութարեր միջոցառումների համար պէտք եղած ուսումնասիրութիւնները կատարելու եւ Թեմական Խորհրդի պատշաճ խորհուրդներ տալու եւ ծրագրած առաջարկներ ներկայացնելու համար, Թեմական Խորհրդի կողմից կեանքի է կոչում մի Տնտեսական Մարմին, բաղկացած 5-7 լրատեղեակ ու փորձառու ազգայիններից:

Տնտեսական Մարմնի գործունեութեան ժամանակաշրջանը երկու տարի է:

30ԴԻԱԾ 71

Տնտեսական Մարմինը Թեմական Խորհրդի խորհրդատուն է տընտեսական մարզերում եւ ունի հետեւեալ պարտականութիւնները՝

ա- Վերահասու է լինում Թեմի ազգապատկան կալւածների եւ դրանց լրացոյցն օգտագործման, բարեփոխման եւ առաւելագոյն նիւթական շահերն ապահովելու նպատակով, խորհուրդներ է տալիս Թեմական Խորհրդին եւ առաջարկներ ներկայացնում:

բ- Ցուցակագրում է Թեմիս ազգապատկան բոլոր անշարժ ու շարժական կայքերն ու գոյքերը եւ կազմըւած ցանկը համապատասխանեցնում յետագայ բոլոր փոփոխութիւններին:

գ- Ուսումնասիրում է եւ ծրագրում առաջարկներ ներկայացնում Թեմական Խորհրդին բարելաւելու համար Թեմիս նիւթական վիճակը, աւելացնելու համար եկամուտներն ու յատկապէս ապահովելու համար ծխական տուրքի կանոնատր գանձումները:

դ- Ուսումնասիրում է եւ ծրագրում առաջարկներ ներկայացնում Թեմիս ազգային մարմինների եւ

հաստատութիւնների ու մանաւանդ ազգապատկան դպրոցների նիւթական կարիքները հոգալու եւ բացը լրացնելու միջոցների եւ հնարարութիւնների մասին:

ե- Ուսումնասիրում է ծրագրած առաջարկներ է ներկայացնում Թեմական Խորհրդին, ուղղակիօրէն կամ անուղղակի կերպով ձեռնարկելու համար հասութարեր տարբեր աշխատանքների:

զ- Խորհուրդ է տալիս Թեմական Խորհրդին այն բոլոր տնտեսական բնոյթ ունեցող հարցերի առնչութեամբ, որոնք Թեմական Խորհրդի կողմից յղում են Տնտեսական Մարմնին պատշաճ ուսումնասիրութիւններ կատարելու եւ առաջարկներ ներկայացնելու նպատակով:

30ԴԻԱԾ 72

Տնտեսական Մարմնի կողմից ծրագրած ու ներկայացւած առաջարկները, Թեմական Խորհրդի վաւերացումն ստանալուց յետոյ, գործադրում են պատկան ազգային մարմինների եւ կամ ուղղակիօրէն Տնտեսական Մարմնի միջոցով:

30ԴԻԱԾ 73

Տնտեսական Մարմինը առանձին նիւթական գործունեութիւն չունի, նրա նիւթական գործունեութիւնը կատարում է Թեմական Խորհրդի միջոցով:

30ԴԻԱԾ 74

Տնտեսական Մարմինը իր գործունեութեան շրջանի ամէն տարեվերջին, իր միամեայ գործունեութեան ամբողջական զեկոյցը ներկայացնում է Թեմական Խորհրդին:

12.ՄՀԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԱՐՄԻՆ

30ԴԻԱԾ 75

Մշակութային Մարմինը կազմում է 5-7 անդամներից, որոնք նշանակ-

ւում են Թեմական Խորհրդի կողմից՝ հայ մշակոյթին լրատճանօք անհատներից, երկու տարւայ ժամանակաշրջանի համար:

30ԴԻԱԾ 76

Մշակութային Մարմնի պարտականութիւններն են՝

ա- Համարդել թեմում կատարող մշակութային աշխատանքները եւ նպաստել այդ աշխատանքների զարգացման:

բ- Կապ պահպանել թեմիս մշակութային միութիւնների, հաստատութիւնների եւ ակումբների հետ:

գ- Կազմակերպել համազգային բնոյթ կրող տօնակատարութիւններ, հանդէսներ ու ձեռնարկներ՝ ապահովելով միութիւնների եւ կազմակերպութիւնների համագործակցութիւնը:

դ- Քաջալերել գրական-թատերական եւ գեղարուեստից այլ մարզերում կատարող աշխատանքները, հիմնադրելով Ֆոնդեր, մրցանակներ ու նիւթատութիւններ:

ե- Կազմակերպել կլոր սեղաններ, հանդիպումներ, սեմինարներ եւ համագումարներ՝ ուսումնասիրելու համար թեմիս մշակութային եւ հասարակական կեանքը, պահանջները եւ այդ կեանքը բարգաւաճեցնելու միջոցները:

զ- Կազմակերպել հրապարակային դասախօսութիւններ, հարցազրոյց եւ ասուլիսներ ազգային-կրօնական խնդիրների վերաբերեալ:

30ԴԻԱԾ 77

Մշակութային Մարմնի նիւթական գործունեութիւնները կատարում են Թեմական Խորհրդի միջոցով:

30ԴԻԱԾ 78

Մշակութային Մարմինը ենթակայ է Թեմական Խորհրդի հակակշռին եւ տւած որոշումներին, իր գործունեութեան շրջանի ամէն տարեվերջին, միամեայ զեկոյցը ներկայացնում է Թեմական Խորհրդին: ■

Թեմական

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսու մեր սիրելի համայնքին տեղեկացնում ենք, որ Թ. Հ. Թ. 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրական կենտրոնական յանձնախմբի կողմից նախապես կեանքի կոչված՝ Թեհրանի ընտրատարածքների ենթայանձնախմբների որոշ անդամները իրենց զբաղաժուրեան պատճառով հրաժարել են ենթայանձնախմբի կազմից, ուստի կենտրոնական յանձնախումբը նրանց փոխարինել է նոր անդամներով:

Առ այդ, մեր համայնքին ենք ներկայացնում քեհրահախայութեան հինգ թաղամասերի ընտրական ենթայանձնախմբների լրացւած ու վերջնական ցանկը ըստ հետեւեալի.

Պ. Ժ. ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԱՆԿԱՆՑԱՆԿ

ՍՐԲ. ԹԱՐԳԱՆՉԱՅ ԵԿԵՂԵՑԻ

1. Շահէն Բաղրամեան
2. Արտաւազդ Սկրտչեան
3. Մուսաննա Համբարչեան
4. Անդրանիկ Մուրադեան
5. Արաքս Բազիկեան
6. Խեչում Խեչումեան
7. Ջարեհ Մարտիկեան
8. Ազատ Յակոբեան
9. Վիզէն Խանքաբայեան

ՍՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

1. Թաթուլ Եղգարեան
2. Մէու Մեհրաբեան
3. Մարօ Այազեան
4. Յարութիւն Յարութիւնեան
5. Սերժիկ Սիմէոնեան
6. Վահէ Նազարբեգեան
7. Արտաշէս Իսկանդարեան
8. Գեորգ Ղազարեան
9. Ռուբիկ Ռոստոմեան

ՍՐԲ. ՎԱՐՂԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻ

1. Մարօ Դիլանչեան
2. Վիզէն Պօղոսեան
3. Վարդան Արեղի
4. Արամ Նոշաղեան
5. Ժոռէս Գրիգորեան
6. Վարուժ Համբարձումեան
7. Վարուժ Արուլեան

ՍՐԲ. ԱՍՏԻՍԻՍԻՆ ԵԿԵՂԵՑԻ

1. Հմայեակ Խաչիկեան
2. Սիմէոն Դուկասեան
3. Ներսիկ Ալլահվերդեան
4. Էմմա Տէր Աբրահամեան
5. Ստելա Երիցեան
6. Վանիկ Մարիտոշեան
7. Թինա Թահմազեան

ՍՐԲ. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

1. Էդմոնդ Արեղի
2. Մերոժ Համբարձումեան
3. Արմինէ Գրիգորեան

4. Մարգիս Յարութիւնեան
5. Էդիկ Հովեան
6. Նորիկ Դաւթեան
7. Ռամոն Յովսէփեան
8. Նարբէ Պետրոսեան
9. Ռաֆիկ Պօղոսեան

Հարկ է նշել կեանքի կոչւած ենթայանձնախմբերը արդէն իսկ սկսել են ընտրութիւնների նախապատրաստական եւ քարոզչական աշխատանքները թաղամասերում եւ մինչ այժմ միութիւնների, եկեղեցական խորհուրդների ու ազգային մարմինների համագործակցութեամբ կազմակերպել է ժողովրդական հանդիպումներ, որտեղ ընտրական կենտրոնական յանձնախմբի ներկայացուցիչները եւ ազգային մարմինները անհրաժեշտ բացատրութիւններն ու տեղեկութիւնները ընտրութիւնների գործընթացի ու կատարած աշխատանքների մասին փոխանցել են ժողովրդին:

Թ. Շ. Թ. 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԱՏԵՆԱԴՊԻՐ՝
Թ. ԹՈՎՄԱՍԵԱՆՅ Ս. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սիրելի հայրենակիցներ՝

Ի հաստատումն մեր նախորդ հաղորդագրութեան (30 օգոստոս 2000թ.) այսու բոլոր այն հայրենակիցներին, որոնք ցանկանում են իրենց թեկնածութիւնը ներկայացնեն 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրութիւններին՝ տեղեկացնում ենք, որ կարող են սոյն թւականի սեպ. 9-ից ամէն օր (երեկոյեան ժամերին) դիմել իրենց ընտրատարածքի 12-րդ Պատգամատրական ժողովի ենթայանձնախմբին եւ ստանան համապատասխան դիմումնագիր եւ այլ հարցաթերթիկներ արձանագրուելու համար:

12-րդ Պատգամատրական ժողովի թեկնածուների պայմաններն են.

Ա- 25 տարեկան հասակը լրացրած լինեն:

Բ- Քւէարկութեան թւականից առնուազն 6 ամիս առաջ բնակութիւն հաստածած լինեն իրենց ընտրական շրջանում:

Գ- Նազազոյնը վերջին 4 տարւայ ծխական տուրքը վճարած լինեն:

Դ- Միջնակարգի վկայագիր (դիպլոմ) ունենալ եւ հայերէն լեզուի գրամանաչ լինել:

Ծանօթ- Միայն բացառում են այն ազգայինները, որոնք 9 տարւայ կրթութեան մակարդակ ունենան եւ 10 տարւայ աշխատանքի փորձառութիւն՝ ազգային-հասարակական մարմիններում:

Ե- Իրենց ընտրական շրջանում վատ համբաւ չունենան:

Զ- Բոլոր թեկնածուները պիտի ամբողջութեամբ լրացնեն Ընտրական Կենտրոնական յանձնախմբի հարցաթերթիկները:

Է- Առնուազն 15 ազգայիններ նոյն ընտրատարածքից պիտի առաջարկեն թեկնածուին 12-րդ Պատգամատրա-

Թեմական

կան ժողովի պատգամատրութեան համար՝ հարցաթերթիկի հետ կցած Ֆորմի վրայ:

Ը- Թեկնածուն հարցաթերթիկի հետ (2 գլուխ) կցած պատկան շրջանի ենթայանձնախմբին է յանձնում հետեւեալ փաստաթղթերը.

- * Մէկ պատճեն իր ինքնութեան թղթի բոլոր էջերից:
- * 2-6 հատ վերջին տարւայ լուսանկար (6-4 cm):
- * Դատական անսպարտութեան վկայական:

Սոյն վկայութիւնը ստանալու համար թեկնածուն պիտի դիմի Ազգային Առաջնորդարան՝ 12-րդ Պատգամատրական ժողովի կենտրոնական ընտրական յանձնախմբին գրասենեակ համապատասխան դիմումնագիրը ստանալու համար:

Թ- Թեկնածուներն ընտրելու պարագայում, թմրամոլութիւնից զերծ լինելու վկայագիր պէտք է ներկայացնեն:

Թեկնածուները համապատասխան հարցաթերթիկները լրացնելուց եւ պահանջած վկայականների բնագիրը, պատճենը եւ ինքնութեան թղթի բնագիրը մինչեւ սոյն քուսակի սեպ. 23-ի երեկոյեան ժամը 8-ը պիտի յանձնեն իրենց շրջանի ընտրական ենթայանձնախմբին եւ ստանան համապատասխան ստացական:

Պատգամատրութեան ընտրումն են առաւել քէ շահելու հիմունքով (առանց նկատի ունենալու քէների տոկոսային յարաբերութիւնը լրի քէարկողների հետ): Իրաքանչիւր քաղաքամասում ընտրած պատգամատրութեան յետոյ, առաւել քէ շահած թեկնածուներն հերթականութեամբ պատգամատրութեան անձնափոխանորդներ են համարուում:

Թ. Շ. Թ. 12-րդ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

**ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԱՏԵՆԱԴՊԻՐ
Թ. ԹՈՎՄԱՍԵԱՆՅ Ս. ՍԱՏԹԵՈՍԵԱՆ**



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միեւնի հայրենակիցներ՝

Թեհրանի հայոց թեմի 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրական կենտրոնական յանձնախումբը նկատի ունենալով մեր ժողովրդի տեղաշարժը Թեհրան քաղաքում եւ ուսումնասիրելով մի շարք վիճակագրութիւններ ու նաեւ ծխատէր քահանաների հաղորդած տեղեկութիւնները թեհրանահայութեան հինգ քաղաքամասերի ընտրական շրջանների բնակչութեան պատկերի մասին՝ կանոնադրութեան 30-րդ յօդուածի բ կէտի համաձայն Թ. Շ. Թ. Թեմական խորհրդին առաջարկեց ներքոյիշեալ պատգամատրութեան ցանկը, որը հաստատուեց Թեմական Խորհրդի կողմից իրենց կայացած 190-րդ նիստում, որը եւ հաղորդում ենք մեր ժողովրդին առ ի տեղեկութիւն:

Ա- Ս.Մարգիս եկեղեցու ընտրական շրջան՝ 13 պատգամատր:

Բ- Ս.Թարգմանչաց եկեղեցու ընտրական շրջան՝ 13 պատգամատր:

Գ- Ս.Գրիգոր Լուսատրիչ եկեղեցու ընտրական շրջան՝ 8 պատգամատր:

Դ- Ս.Վարդանանց եկեղեցու ընտրական շրջան՝ 3 պատգամատր:

Ե- Ս.Աստուածածաին եկեղեցու ընտրական շրջան՝ 3 պատգամատր:

Ի քացառեալ վերոյիշեալ ցանկը Թեհրանի հայոց թեմի շրջանում գտնուող քաղաքները նաեւ ընտրում են իրենց պատգամատրները հետեւեալ ցանկով.

- Արաքի շրջան 2 պատգամատր
- Ղազվինի շրջան 1 պատգամատր
- Ռաշտի շրջան 1 պատգամատր
- Անգալիի շրջան 1 պատգամատր
- Սարիի շրջան 1 պատգամատր
- Գորգանի շրջան 1 պատգամատր

Թ. Շ. Թ. 12-րդ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

**ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԱՏԵՆԱԴՊԻՐ՝
Թ. ԹՈՎՄԱՍԵԱՆՅ Ս. ՍԱՏԹԵՈՍԵԱՆ**



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

12-րդ Պատգամատրական ժողովի ընտրութեան թեկնածուների արձանագրութեան ժամկէտ

Այսու մեր համայնքի այն հայրենակիցներին, որոնք ցանկանում են Թ. Շ. Թ. 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրութիւններում իրենց թեկնածութիւնը ներկայացնեն, տեղեկացնում ենք, որ ընտրական կենտրոնական յանձնախումբը աշխատանքները կարգաւորելու նսպատակով հետեւեալ ժամկէտային ժրագիրն է մշակել ընտրութեան արձանագրութեան համար, ըստ որի թեկնածուները պէտք է նշած ժամկէտներում իրենց բոլոր փաստաթղթերը ներկայացնեն պատկան ընտրաշրջանների ենթայանձնախմբերին եւ ծրագրի համաձայն սկսեն քարոզչական աշխատանքները:

Մեպտեմբեր 9 առ 23, 2000թ.

Թեկնածուների արձանագրութեան ժամկէտ:

Մեպտեմբեր 24-25-26, 2000թ.

Ենթայանձնախմբերի հաստատման ժամկէտ:

Մեպտեմբեր 27-28, 2000թ.

Մերժած թեկնածուների բողոքի ներկայացման ժամկէտ:

Մեպտեմբեր 29-30, 2000թ.

Կենտրոնական ընտրական յանձնախմբի պատասխանը՝ թեկնածութիւնը մերժած բողոքողներին:

Հոկտեմբեր 1-2-3, 2000թ.

Հաստատուած թեկնածուների ցանկի հրապարակում:

Հոկտեմբեր 4-18, 2000թ.

Թեկնածուների քարոզչութեան ժամկէտ:

Հոկտեմբեր 19-ից, 2000թ.

Թեկնածուների քարոզչութեան դադարում:

Հոկտեմբեր 20, 2000թ.

Թ. Շ. Թ. 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրութիւններ

Թ. Շ. Թ. 12-րդ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

**ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԱՏԵՆԱԴՊԻՐ
Թ. ԹՈՎՄԱՍԵԱՆՅ Ս. ՍԱՏԹԵՈՍԵԱՆ**


Հասարակական

Արտագաղթը համազգային դժբախտ ցաւ է: Արտագաղթողները մարդիկ են, որոնք կորցրել են իրենց ազգային արժանապատւութիւնը, եւ ...

Շարցագրոյց՝

ՍԵՐՈՐԺ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԻ հետ

Թղթակից.- Նախ թոյլ տուէք շնորհակալութիւն յայտնել Ձեզ՝ Ձեր ժամանակը մեզ տրամադրելու կապակցութեամբ:



Շ.- Կը խնդրեմ ներկայացնել Ձեր կենսագրութիւնը՝ համառօտ կերպով:

Պ.- Ծնել եմ 1941 թականին՝ Արաքի շրջանի հայաշատ գիւղերից մէկում, յետագայում վերաբնակել եմ Թեհրանում: Նախնական կրթութիւնս ստացել եմ «Դանայի», «Արովեան» եւ «Քուշեշ» դպրոցներում, որից յետոյ ուսումնառումս շարունակել եմ Թեհրանի պետական համալսարանի ճարտարապետական բաժնում: Աւարտելով համալսարանը՝ աշխատանքի եմ անցել: Աշխատել եմ հիմնականում ազգային մարմիններում, եղել եմ Պատգամաւորական Ժողովի եւ Թեմական Խորհրդի անդամ, տարել եմ միութենական բազմաբնոյթ աշխատանքներ:

1994 թականին՝ մի խումբ ընկերներով, որոշեցինք Հայաստան ներգաղթելու առաջին փորձը անել, բայց մեծ յաջողութիւններ ձեռք չբերեցինք, այնուամենայնիւ 1996 թականին ինձ յաջողեց մեկնել Հայաստան, ուր նպատակ ունէի զբաղել իմ մասնագիտական աշխատանքով՝ ճարտարապետութեամբ: Հայաստանում ես որոշ դրամագլուխ ներդրեցի շինարարական ոլորտում, որից յետոյ, փառք Աստուծոյ յաջողութիւնը ինձ ժպտաց եւ արդէն մէկ տարի է, ինչ բնակւում եմ Երեւանում՝ իմ կողմից նախագծւած եւ կառուցւած տան մէջ:

Շ.- Որո՞նք էին այն դրդապատճառները, որ ստիպեցին Ձեզ գնալ եւ հաստատուել Հայաստանում:

Պ.- Հայրենիքում ապրելու ցանկութիւնը, սա է եղել հիմնական դրդապատճառը:

Շ.- Իսկ Հայաստանում միայն շինարարական աշխատանքներ էք տարել:

Պ.- Այո, միայն շինարարական: Իհարկէ այս ոլորտըն էլ զանազան աշխատանքներ է ընդգրկում իր մէջ: Յատկապէս, ուզում եմ ընդգծել, որ իմ կողմից կառուցւած շէնքը գնել են սփիւռքահայերը, որոնք ցանկութիւն ունեն Հայաստանում ապրելու: Եւ ուրախ եմ, որ այդ վերաբնակւած անձինք դրամագլուխ են բերել Հայաստան՝ ներդնելով դրանք տարբեր ոլորտներում:

Շ.- Որո՞նք են Ձեր յետագայ ծրագրերը:

Պ.- Նոյնը՝ շարունակել շինարարական աշխատանքները: Ես արդէն նախաձեռնել եմ երկրորդ շէնքի կառուցումը:

Շ.- Որքանով, որ Դուք տեղեակ էք, որոշ իրանահայեր, յատկապէս երիտասարդներ ցանկութիւն ունեն եւ փորձեր էին կատարել Հայաստանում բնակութիւն հաստատելու համար, սակայն դժբախտաբար վատ տպաւորութիւններով են յետ վերադարձել: Ի՞նչ խորհուրդներ կը տայիք նրանց:

Պ.- Իմ կարծիքով, դա կախւած է իրենց ցանկութեան խորութիւնից: Այն մարդը, որ նպատակադրած է որեւէ ցանկութիւն իրականացնելու՝ պէտք է արհամարհի թէ՛ դժարութիւնները, թէ՛ նախնական տպաւորութիւնները:

Ես խորհուրդ կը տայի մի կողմ թողնել մնան տպաւորութիւններ եւ քաջ գիտակցել, որ Հայաստանը մեր հայրենիքն է, եւ մենք այդ հայրենիքի տէրն ենք: Հարեւանցիօրէն չենք մտել այդ երկիրը, որ այդ տպաւորութիւններով էլ հեռանանք: Մեզ պէտք է տէր զգանք:

Շ.- Իսկ ի՞նչ էք կարծում, արդէ՞օք նախնական հող կայ, որպէսզի իրանահայերը գնան եւ հաստատուեն այնտեղ:

Պ.- Այո, իհարկէ: Նախ Հայաստանը հիմա ինչ-որ առումով անփորձ երկիր է, եւ հետեւեալ կերպ եմ մտածում, որ կայ հարուստ եւ մեծ Ռուսաստան, իսկ եկող դարաշրջանը Ռուսաստանի համար հզօրացման շրջան է լինելու: Այս երկրի հետ մենք կապեր ենք հաստատել դեռ աւելի վաղ անցեալից: Ինչպէս գիտենք ստրատեգիական առումով էլ Ռուսաստանը մեր վաղեմի բարեկամն է: Նոյնը իհարկէ ներկայումս վերաբերում է Իրանին: Մենք կարող ենք շատ յարմար կամուրջ հանդիսանալ ողջ աշխարհը Ռուսաստանի հետ կապելու գործում: Յատկապէս տնտեսական բնագաւառում: Այսօր Հայաստանում կարող են հիմնել ծառայողական գրասենեակներ, որոնք կիրականացնեն ցանկացած տնտեսական գործարք՝ Ռուսաստանի եւ այլ երկրների միջեւ:

Շ.- Նախկինում շատ սփիւռքահայեր մտավախութիւն ունէին, թէ Հայաստանում դրամագլխի ներդրման անապահովութիւն գոյութիւն ունի, կամ բան-կային համակարգը լաւ իրացւած չէ երկրում, ինչ-պիսի՞ փոփոխութիւններ են հիմա նկատուում եւ ինչ-պէ՞ս կը գնահատէիք դրանք:

Պ.- Իմ կարծիքով բանկային համակարգը ապահով է, եւ արդէն չորս տարի է, որ Հայաստանի «Սիլվեոն» բանկում հաշիւ եմ բացել եւ կարող եմ աշխարհի ցանկացած երկրում այդ բանկից գումար ստանալ: Սինչեւ 10000 դոլար կարող ես դուրս բերել երկրից: Եթէ բանկային համակարգը անապահով են որակել, ապա իմ կարծիքով նկատի են ունեցել այն Ֆոնդերը, որոնք սկզբնական շրջանում հիմնւած են եղել եւ որոշ աւանտուրիստ մարդկանց կողմից ներդրւած դրամները իւրացել էին եւ երկրից դուրս տարւել, բայց հիմա այդ երեւոյթը բոլորովին առկայ չէ Հայաստանում եւ ապահովութեան խնդիրները լուծւած են: Վերջին 4 տարւայ ընթացքում հարեւան երկրներում՝ Իրանում, Թուրքիա-

Հասարակական

յում, Ադրբեջանում, Վրաստանում եւ նոյնիսկ Ռուսաստանում տարադրամի արժեքը մի քանի անգամ փոփոխութեան է ենթարկել, սակայն Հայաստանում յիշեալ տատանումները չեն անցել 3%-ից: Սա ապացուցում է բանկային համակարգի կուռ լինելը:

Շ.- Իսկ իրանահայերը, Հայաստանում եղած «Սեյլաթ» բանկի մասնաճիւղից, ինչպէ՞ս են կարող օգուել:

Պ.- Կարող են գնալ հաշիւ բացել: Այստեղ հաշիւ բացելու երկու ձեւ կայ՝ ընթացիկ եւ խնայողական:

Շ.- Ներկայումս արտագաղթի ցուալի երեւոյթը չափազանց շօշափելի է դարձել թէ՛ Հայաստանում, թէ՛ Իրանում: Տարբեր կարծիքներ գոյութիւն ունեն այդ երեւոյթը կանխելու կամ նւազեցնելու համար: Ինչպիսի՞ կարծիք ունէք Դուք արտագաղթը գոնէ նւազեցնելու մասին:

Պ.- Ես արտագաղթի վերաբերեալ չափազանց բացասական վերաբերմունք ունեմ եւ ոչ մի կերպ չեմ արդարացնում այդ քայլը: Ըստ որոշ հայերի՝ իրենց արտագաղթման պատճառը բացատրում են իրենց սոցիալապէս անապահով վիճակով: Իսկ Հայաստանն էլ աղքատ է, անապահով, գործազրկութիւն է տիրում եւ այլն: Սա աւելի շուտ յանցանք է, քան պատճառ: Ոչ մի ազգի ներկայացուցիչ այս պատճառաբանութեամբ իրաւունք չունի հեռանալ երկրից՝ լքելով այն: Քանզի նոսրի են կանգնել իրենց ժողովրդի շնորհիւ, որոնք քարը քարի վրայ դնելով հասել են զարգացման այդ աստիճանին: Երկրի ժողովուրդն է, որ օրէնքները մշակում, սխալները շտկում եւ կառուցում է իր երկիրը:

Արտագաղթը համազգային դժբախտ ցու է: Արտագաղթողները մարդիկ են, որոնք կորցրել են իրենց ազգային արժանապատւութիւնը, եւ ոչ միայն ազգային, այլ ընդհանրապէս արժանապատւութիւնը: Մարդիկ կան, որոնք պատրաստ են ընտանեօք հանդերձ կանգնել, ապաստան խնդրել, հաց մուրալ եւ սա դառնում է համաճարակ, համատարած երեւոյթ: Սակայն երբ ես Ամերիկայում հանդիպեցի արտագաղթողների հետ, տեսայ, որ բոլորի սիրտը կարօտից այրում է, իրենք չափազանց դժգոհ են իրենց կատարած քայլից, եւ երբ նրանց հետ այդ մասին խօսում ես, ապա միանգամից նրանք սկսում են արտասել: Արտագաղթողների այն տարրն է հաստատել Ամերիկայում կամ կոնկրետ Լոս Անջելեսում, որը թքած ունի հայրենիքի վրայ էլ, հայրենիքը զարգացնելու վրայ էլ: Նրանք ամէն ինչում հասարակ, անորակ, անմակարդակ անհաստների են վերածում: Պարզապէս մարդիկ հաւաքել են իրար գլխի, որ ուղղակի գոյատեւեն: Իսկ Ամերիկայի այն քաղաքներում, ուր չկան արտագաղթածներ, մարդկանց մակարդակը բոլորովին ուրիշ է: Ես կարող եմ մէկ խորհուրդ տալ, մարդը պէտք է կեանքը տեսնի հետեւեալ ձեւով՝ կեանքը գաղափար է, եւ այդ գաղափարին հասնելու համար պէտք է պայքարել: Պայքարը միայն պատերազմի դաշտում չէ: Եւ այս պայքարը պէտք է տեսնենք հէնց այս բանում, որ գնաս Հայաստան՝ քո երկիր եւ գիտակցես, որ եթէ քարը քարի վրայ դրեցիր՝ դա քունն է:

Շ.- Ինչպէ՞ս էք գնահատում Հայաստանի տնտեսական եւ քաղաքական իրավիճակը:

Պ.- Հայաստանը հիմա քաղաքականապէս գնում է դէպի կայունութիւն: Հիմա երկրում մախագահական ինստիտուտը, արդէն քայլ առ քայլ ձեւաւորում եւ զարգանում է, իսկ տնտեսապէս վերելք կապրի, միայն թէ այդ ընթացքը աւելի դանդաղ կը լինի:

Շ.- Քաղաքական իրավիճակը հիմա ինչպէ՞ս է:

Պ.- Քաղաքական իրավիճակը հիմա աւելի հանդարտ է, այն խառնաշփոթ վիճակը, որի ընթացքում կուսակցութիւնների թիւը սնկի պէս աճում էր, եւ ամէն մէկը մի ժողովրդական արտայայտութիւն էր անում, որպէսզի ժողովրդին իր շուրջը հաւաքի՝ անցել է, ժողովուրդը քաղաքականապէս աւելի հասուն է դարձել եւ երկրում քաղաքական դաշտը աւելի կայուն է: Հիմա ամենակարեւոր եւ հրատապ հիմնախնդիրը, որ Հայաստանի առջեւ ծառայած է՝ Ղարաբաղեան հարցն է: Ինչպէ՞ս կը լուծի այդ հարցը, իհարկէ, վերջ ի վերջոյ, անկանխատեսելի է:

Եւ, որ ամենակարեւորն է Ղարաբաղեան հիմնախնդրի լուծումը կախած է Ռուսաստանի քաղաքական դաշտի կայունութիւնից, ինչը Վ. Պուտինի ընտրուելուց յետոյ քայլ առ քայլ ձեռք է բերում: Իմ կարծիքով նման քաղաքական անդորրը երկարատեւ կը լինի:

Շ.- Հիմա ես կը ցանկանայի անդրադառնալ իրանահայ համայնքում եղած խնդիրներին, քանի որ Դուք բազում տարիներ ակտիւ ազգային- հասարակական գործունէութիւն էք ծաւալել այստեղ եւ քաջատեղեակ էք եղել բոլոր ներքին խնդիրներին: Ինչպէս Դուք արդէն տեղեակ էք, մօտ ժամանակներում համայնքում պէտք է կայանան Պատգամատրական Ժողովի ընտրութիւնները, եւ ինչպէս գիտեք դրանք պէտք է անց կացուն կամ համամասնական, կամ մեծամասնական ընտրակարգերով, ո՞րն է Ձեր մախապիրած ընտրակարգը:

Պ.- Ես՝ ձեր թոյլտւութեամբ չէի ցանկանայ խօսել այդ երկու ընտրակարգերի արդիւնաւետութեան մասին, ըստ իս՝ դրանք պէտք է այնպիսին լինեն, որպէսզի մեր ժողովրդի իրական պատկերը լիովին արտացոլի նորընտիր ՊԺ-ը: Մեր համայնքը առողջ համայնք է, եւ մենք ոչ մի իրաւունք չունենք այդ առողջութիւնը քայքայելու: Իսկ առողջութիւնը կը պահպանի այն ժամանակ, երբ համայնքի բոլոր ներկայացուցիչները կարողանան ազատ արտայայտել իրենց տեսակետները, իսկ առողջ դատողութիւններ՝ անելու համար պէտք է առողջ մթնոլորտ: Բայց ամէն դէպքում թէ՛ մեծամասնութեան, թէ՛ փոքրամասնութեան կարծիքը պէտք է արտացոլի որոշումների մէջ, որպէսզի աշխատանքը աւելի արդիւնաւետ ձեւով ընթանայ: Սա օգտակար է համայնքի ղեկավարութեան համար, որոնք պէտք է թոյլ տան իրենց տեսակետները չբաժանող մարդիկ եւս կարողանան արտայայտել, ներկայացնել սեփական դատողութիւնները: Ընդդիմախօսութիւնը առաջադիմութեան մեծ գրաւականն է:

Հասարակական

Ցանկալի է մենք ունենանք մեկ Կաթողիկոս, որը պետք է կոչվի Ամենայն Հայոց Կաթողիկոս

Հարցազրույց՝ Ալբերթ Բեռնարդիի հետ

Թխքակից. - Նախ շնորհակալություն ենք յայտնում Ձեր քանկազին ժամանակը մեզ տրամադրելու հա-մար: Դուք մեր համայնքում հռչակ վայելող իրաւաբան էք, մտաւորական գրող եւ քարգմանիչ, նաեւ երկար տարիների ազգային-հասարակական գործիչ: Ուրեմն կը խնդրէիք խօսել Ձեր մասին, ներկայացնել Ձեր կենսագրութիւնը:



Պ. - Նախ ուզում եմ շնորհակալութիւն յայտնել ձեր ուշադրութեան համար, չգիտեմ, արդե՞օք արժանի եմ այս հանդիպմանը, թէ ոչ: Սակայն քանի որ շնորհ էք բերել՝ սիրով կը պատասխանեմ ձեր հարցերին:

Ծնել եմ 1926 թականին՝ ԱՖղանստանի մայրա-քաղաք՝ Բարդոյում: Եւ գուցէ միակ հայն եմ աշխարհում, որ այդտեղ եմ ծնել: Թէեւ ըստ իմ ինքնութեան թղթի՝ Թեհրան եմ ծնել: Ուսանել եմ Թեհրանում՝ ասարտելով պետական համալսարանի իրաւաբանական Ֆակուլտետը: Սկսած 1950 թականից աշխատել եմ իմ մասնագիտական բնագաւառում: Այսինքն՝ կէս դար է, ինչ այս գործով եմ զբաղում: 1970 թականին ընտրել եմ Իրանի իրաւաբանական կազմակերպութեան վարչութեան անդամ: Այժմ էլ այդ կազմակերպութեան ներկայացուցիչն եմ «Միջազգային իրաւաբանական» միութեան մէջ՝ Լոնդոնում: 1989 թականին ստացել եմ իրաւաբանական պատուոյ դոկտորի կոչում «Ամերիքեան ջեներալ սիթի Ֆանդէլշըն»-ից: Ներկայումս անդամակցում եմ միջազգային իրաւաբանական միութեանը, եւ պարզ անդամ եմ «Միջազգային իրաւաբանական ուսումնասիրման կենտրոնի», որը գտնուում է Աւստրիայում: 1988 թ. պարգեւատրուել եմ Իտալական կառավարութեան կողմից «Կաւալէր» (ասպետ) շքանշանով: Սոյն տարւայ մայիս ամսին մասնակցել եմ Ֆրանսիայի Վերսայ քաղաքում կայացած միջազգային իրաւաբանական կազմակերպութեան համագումարին որպէս Իրանի միակ ներկայացուցիչը, ըն-

տրուելով 4000 իրաւաբաններից որը կարելի է ազգային հպարտութիւն համարել: Այսքանը իրաւաբանական ասպարէզի մասին: Գալով գրական գործունէութեան, եւ երկար տարիներ աշխատակցել եմ իրանական մամուլում, գլխատրապէս «Իրանէ Մա» եւ «Դարիա» կոչող թերթերում: Իմ կողմից տրւած նիւթերը եղել են գրական եւ քաղաքական թեմաներով: 1954 թականին անգլերէնից պարսկերէնի եւ թարգմանել «Ոճիրներ, որոնք ցնցեցին Ամերիկան» հաստատիր դատավարական գիրքը, որն այն ժամանակ երեք անգամ վերահրատարակել է: 1964 թականին պարսկերէնի եւ թարգմանել Գրիգոր Զոհրապի երկերից ընտրած «17 պատմածքներ» գիրքը: Նաեւ երկար տարիներ աշխատակցել եմ «Ալիք» օրաթերթին: Երբ 1947-8 թականներին աշխատակցում էի պարսկական «Դարիա» օրաթերթին՝ թարգմանել եմ Զարեանդի «Պան Թուրքիզ» գիրքը, եւ Ա. Ահարոնեանի «Լուրին» գրական նիւթը, որոնք երկուսն էլ տպագրուել են թերթոնի ձեռով: Ազգային կենսքում եւս բերել եմ իմ համեստ մասնակցութիւնը: Նախագահել եմ «Հայ երիտասարդական մշակութային միութիւն», այժմ՝ «Արարատ» մարզամշակութային կազմակերպութեանը, «Հայ համալսարանականների միութեանը», 18 տարի «Հայ ակումբի» վարչութեանը: Անդամակցել եմ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ազգային կենտրոնական վարչութեանը, եղել եմ Թեհրանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի եւ Թեմական Խորհրդի անդամ: Ամուսնացել եմ 1950 թականին, կինս՝ Սեդան մասնագիտութեամբ ատամնաբոյժ է, սակայն երկար չի զբաղել այդ գործով, եղել է տնային տնտեսուհի: Հրաշալի կերպով տիրապետում է հայերէնին: Նոյնն էլ գաւակներս, որոնք արտասահմանում են, բայց կնոջս շնորհիւ ունեն հայեցի կատարեալ դաստիարակութիւն: Իսկ յուշեր անցեալից շատ կան: Յիշում եմ, որ 1975 թականին էր եղեանի 60 ամեակն էր ոգեկոչում: «Արարատ» մարզաւանում, հազարաւոր մարդիկ էին հաւաքել եւ օրւայ բանախօսն էլ եւ էի: Դա իրօք մի յիշարժան երեւոյթ էր:

Հ. - Իսկ հայ հանրաճանաչ լրագրողների հետ ծանօթ էք եղել:

Պ. - Տեսէք մենք ունեցել ենք միայն մեկ թերթ՝ «Ալիք»-ը: Եղել է Հայկ Գարագաշը, բայց եւ այդ ժամանակ փոքր եմ եղել, հետեւաբար առիթ չունեցայ նրա հետ ծանօթանալու: Դժբախտաբար սովորութիւն չեմ ունեցել իմ տպագրւած յօւածները պահելու, բայց մի քանի հատ տանը պէտք է լինի: Դրանք կը տրամադրեմ ձեզ: Դրանցից մէկը, որ պահել եմ՝ լաւ եմ յիշում: Դա մի հանդիպում էր վաստակաւոր դոկտոր «Մաթին Գաթարու» հետ: Այն վերաբերում էր նաթի խնդրին, իրանական 1325 թականին էր, այսինքն նախքան նաթի վերաբերեալ ազգային շարժման առաջացումը: Եւ այս անհատը այնպիսի արտայայտութիւններ արեց, որ չպէտք է անէր, եւ յօրածը լոյս ընծայումից յետոյ, նա ամբարտաւան կերպով, մի հերքում ուղարկեց, թէ այդ հանդիպման ժամանակ իր կողմից տրւած արտայայտութիւնները իրականութիւն չունեն: Նա քաղաքական ականատոր դէմքե-

Հասարակական

րից մեկն էր, Ռեզա շահի օրօք եղել էր վարչապետ, արդարադատության նախարար, խորհրդարանի անդամ եւ թագաւորին մօտ կանգնած խորհրդականներից: Ըստ մամուլի օրէնքի՝ մենք ստիպւած եղանք այդ հերքումը տպագրել, այնուհետեւ ես աւելացրեցի թէ. «Համալր-սարանում եղել են Չեր ուսանողը եւ ինձ թում էր, թէ Դուք արդարութեան, ազնութեան, շիտակութեան, մարդկային բարոյականութեան դասեր էք տալու, բայց հիմա նկատում եմ, որ իմ սերտածը միանգամայն հեռու է իրականութիւնից եւ ցաւում եմ այս խօսքերը գրելու համար: Հանդիպումը, որը Չեզ հետ ես ունեցայ, եւ Չեր կողմից արտայայտած մտքերը իրականութիւն են»:

Վ.- Դոկտոր, քանի որ Դուք մասնագիտութեամբ իրաւաբան էք, ապա մեզ շատ է հետաքրքրում Չեր կարծիքը Թեմի նոր կանոնադրութեան մասին:

Պ.- Թոյլ տւեք ասել, որ ամէն մի կանոնադրութիւն, ամէն մի օրէնք արտաքննապէս լաւ է երեսում, սակայն իրականում յաճախ այն չի լինում, ինչ որ մենք կարդում ենք: Ես եղել եմ թէ՛ Պատգամատրական Ժողովի եւ թէ՛ Դիւանի անդամ, բայց այն ժամանակ էլ, այսօրայ նման իմ դիտողութիւնը այս է, որ եթէ կոչում ենք ընտրութիւն, ընտրութիւն ասելով ես հասկանում եմ երկու կամ մի քանի բաների մէջ: Յարգելի անձանց անանցանկ է հրատարակում, եւ ժողովրդին ասում են՝ եկէք քուէրէք: Լաւ, բայց եթէ այդ անանցանկը 10 ձայն ունենայ, կամ 10.000 միեւնոյն է, ընտրւած են համարում: Դժբախտաբար դա ընտրութեան ձեւ չէ, դա նշանակման բնոյթ է կրում, ինչը կիրառւում է մեր հայ իրականութեան մէջ: Եւ այնուհետեւ ընտրելուց յետոյ կարծես թէ կապը ժողովրդի հետ կտրւում է: Այլ բան է եթէ երկու-երեք ցուցակ լինի եւ ժողովրդին ասեն, որ ծանօթացէք եւ ընտրէք: Ինչպէս տեսնում ենք, հետեւանքը այն է լինում, որ դեկլարութիւնը ընկնում է մէկ հոսանքի ձեռքը, որի հանդէպ մենք շատ էլ յարգանք ենք տածում, բայց ճիշտ չէ, որ մի համայնքում, որի 90%-ը անկուսակցական են, դերակատարութիւն չունենան համայնքի ազգային կեանքում:

Վ.- Դուք ասացիք, որ ժամանակին եղել էք Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կենտրոնական Վարչութեան անդամ, դա ո՞ր թականին էր, այդ ներկայացուցիչը ի՞նչ գործունէութիւն է ծաւալում եւ յետագայ ընթացքը ինչպէ՞ս եղաւ:

Պ.- Այդ անդամները ընտրւում են հինգ տարով: Ես 1973-78 թթ. ընտրուեցի այդ կազմի մէջ: Այդ ազգային կենտրոնական վարչութիւն ասածը, մի տեսակ Գերագոյն Թեմական Խորհուրդ էր: Այնուհետեւ, երբ 1973-ին բոլոր թեմերից եկան այստեղ ժողովի, իմ դրո՞մամբ թեմի կենտրոնական վարչութեան մէջ ներառուեցին տարբեր թեմերի ներկայացուցիչներ, քանի որ նախկինում այն կազմում էր միայն Լիբանանի թեմի ներկայացուցիչներից: 5 տարի այդ թականից սկսած ես աշխատեցի եւ քանի որ անընդհատ գործը պահանջում էր յաճախ ճամփորդել Բէյրութ, ուր ներքին պատերազմ էր, ծանր իրավիճակ էր տիրում երկրում եւ ժողովները յետաձգուում էին, հազիւ ես երկու անգամ գնացի: Այնուհետեւ թէեւ կարծում էի, որ պէտք է աշխատանքս շարունակի, բայց ինձ փոխարինեցին: Այս առումով չեմ կարող որեւէ մեկնաբանութիւն տալ: Այս ազգային Կենտրոնական Վարչութիւնը համար-

ում էր բոլոր թեմերից բարձր՝ Կիլիկիոյ Թեմի Կաթողիկոսութեան Թեմական Խորհուրդ:

Վ.- 1950-ական թականներին Դուք ծաւալել էք շատ ակտիւ քաղաքական- հասարակական գործունէութիւն, այդ թականներին մեր թեմերը բաժանուեցին, մեզ հետաքրքրում է Չեր կարծիքը այս մասին, եւ ինչպէ՞ս ընդունեց դա ժողովրդի կողմից:

Պ.- Այդ անջատումը պարտադրական մի բան եղաւ, պետութեան կողմից թելադրեցին, որ ցանկալի չէ կոմունիստական երկրի հետ դուք այսպիսի սերտ կապերի մէջ լինենք եւ տեղեակ ենք, թէ դուք մէկ այլ Կաթողիկոսութիւն էլ ունէք, ուրեմն միացէք նրան: Բայց հիմա վիճակը այլ է: Այսօր Հայաստանը անկախ երկիր է, այլեւս չկայ կոմունիստական հասարակակարգը, եւ Իրանը դիրքին կերպով յարաբերւում է Հայաստանի հետ՝ բոլոր բնագաւառներում, հետեւաբար ցանկալի է մենք ունենանք մէկ Կաթողիկոս, որը պէտք է կոչի Ամենայն Հայոց Կաթողիկոս, ցանկալի է, բայց դեռեւս կան ազդակներ, գործօններ եւ լծակներ, որոնք շահաւէտ են համարում առկայել՝ Անթիլիասի Կաթողիկոսութիւնը: Իհարկէ սա էլ իր հերթին շատ դրական դեր է խաղացել ազգային կեանքում՝ Սփիւքում: Մասնաւանդ այն տարիներին, երբ Էջմիածնի հետ յարաբերելը դժար էր Սփիւքի մեր մշակութային կրթական կեանքում եւ բոլոր խնդիրներում այն մեծ դեր է ունեցել: Սակայն մենք խօսում ենք այսօրայ մասին, եւ այդ դերը Անթիլիասի կարող է շարունակել առանց երկու կաթողիկոսութիւնների առկայութեամբ:

Վ.- Ի՞նչ կարծիք ունէք Պատգամատրական Ժողովի ընտրութեան ընտրակազմի վերաբերեալ, ո՞րն է ճիշտ, համամասնականը, թէ՞ մեծամասնականը:

Պ.- Ըստ իս՝ ընտրութիւն ասած բառը պէտք է իմաստատուրի, այսինքն մարդիկ հնարատրութիւն ունենան ընտրելու A եւ B-ի միջեւ՝ մէկին կամ աւելին: Սակայն, ինչպէս արդէն ասացի, ընտրութիւնները այստեղ մինչ այժմ կրել են նշանակովի բնոյթ, բայց ինչ վերաբերում է ներկայիս Պատգամատրական Ժողովին, ապա այն պէտք է ընդգրկի հասարակութեան բոլոր խաւերի, շերտերի հոսանքները:

Յուսանք, որ այս ընտրութեան արդիւնքը դրական լինի:

Վ.- Ի՞նչ կարծիք ունէք «Լոյս» երկշաբաթաթերթի մասին, ինչպիսի՞ խորհուրդներ կը տայիք՝ աւելի ճոխաց-նելու եւ կատարեալ դարձնելու վերաբերեալ:

Պ.- Այս երկշաբաթաթերթը, ըստ իս, շատ հաճելի է ընթերցում, տալիս է բազում տեղեկութիւններ: Ես սկսեալս եմ եղել, որ շատ մարդիկ են այս կարծիքի, իհարկէ կան մարդիկ, որոնք բոլորովին անտեղեակ են նրա գոյութեան մասին: Եւ այս պատճառով պէտք է աշխատել տարածել այն՝ բոլոր միջոցներով աւելացնել բաժանորդագրութիւնը:

Յաջողութիւն եմ մաղթում, եւ էլ իմ հերթին պատրաստ եմ համագործակցելու ձեզ հետ: Նաեւ համոզւած եմ, որ «Այլք»-ի հանդէպ լաւ բարեացակամ վերաբերմունք ունէք: ■

**Հարցազրոյցը վարեց՝
Ռ. Սարգսրեանը**

Պարզեւատրում, ո՞ր չափանիշներով...

Ռ. Կորիւն



Տարբեր ժողովուրդների մօտ, նաեւ միջազգայնօրէն պարզեւատրումը հանճարեղ եւ բացառիկ անձանց, գեղեցիկ սովորութիւն է, որը գալիս է հին անցեալներից՝ մեր ներկայ ժամանակների պահանջին պատշաճ յանձնմամբ եւ արարողութեամբ:

Քեանք:

Վեհ նպատակով կատարած պարզեւատրումը արժանատի անձանց՝ դրական խոր պարզութիւն է թողնում հասարակութեան մէջ, վստահութեան եւ առողջ մրցակցութեան դաշտ է ստեղծում, ներշնչման եւ ոգեւորութեան առիթ է հանդիսանում նոր ներդրումների եւ ծառայութեան:

Սակայն միշտ չէ, որ ի հարկին է կատարում պարզեւատրումը, այլ՝ յաճախ ձեւական տեսք է ստանում՝ քաղաքական եւ այլ հաշիւներից մղելով, ի մասնաւորի վարկ եւ հեղինակութիւն ձեռք բերելու մարմանջով:

Մեր հայկական կեանքում, երբ լսում կան կարդում ես, թէ ինչպէս հանրութեան սիրելի եւ արժանատի անձը գնահատել կամ պարզեւատրել է իր բարձր շնորհքների եւ անվերապահ ծառայութեան համար՝ սրտանց ուրախանում ես, շատերն են ուրախանում, շնորհատրանքի եւ շնորհակալութեան անկեղծ խօսքեր են ընծայում նրա հասցէին: Արժանատիներին բարձրացնելը, նրանց յարգ ու պատիւ տալը, ապացոյցն է պարզեւատրող ղեկավար ատեանի շինարար մտածելակերպի եւ արդար դատողութեան:

Հակառակ պարագային, երբ միջակը ներկայացում է որպէս հասարակութեան ընտրեալը եւ արժանատի մնում է սուերի մէջ, բորբոքում ես, թուլանում է հաւատքը ղեկավարի նկատմամբ, անմիաբանութեան սերմեր են ցանում, վստատեսութեան հոգեբանութիւն է առաջանում հանդէպ վերադաս մարմնին:

Վերջերս համայնքում, մտաւորական շրջանակներում, ասուկոսի առիթ է դարձել՝ յուլիս 22-ի, «Արարատ» մարզաւանի «Մատուցի Դ-աիթ» սրահում, Հայաստանի քրիստոնէութեան 1700 ամենակին նիւրած հանդէսի ընթացքում կատարած պարզեւատրումը, «Կիլիկիոյ ասպետ» եւ «Մ. Մեսրոպ Մաշտոց» շքանշաններով քսանմէկ անձանց, ձեռամբն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, ցանկը ներկայացել էր Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեորգի Մեպոսի Եպիս. Սարգսեանի միջոցով (թղթակցութիւնը կարդալ «Ալիք» օրաթերթում, երեքշաբթի 8 օգոստոս 2000, համար 169):

Պարզեւատրողների ցանկը պարզապէս հատուածապաշտական միտումով էր պատրաստել:

Հարցը այս կամ այն հատուածի պատկանելութիւնը չէ, այլ՝ այն անձը, որ հայրենիքի շահը վեր է դասում ամէն ինչից եւ ամենայն նիւրածութեամբ ծառայում է,

դա ժողովրդի սիրելի զաւակն է, արժանի ամէն տեսակ գնահատանքի, սակայն այն ինչ որ ներկայացել էր, հատուածապաշտական միտումնաւոր նպատակներով է առաջնորդած: Անտեսել էին հայ մշակույթի շատ արժանատի նիւթեր, ազգայիններ, որոնց ընդգրկումը ցանկի մէջ, էլ աւելի կարժեւորէր այդ պարզեւատրումը:

Հարց ենք տալիս պատասխանատուներին, թէ ի՞նչ տեսլանքի եւ սկզբունքների վրայ է կազմել ցանկը, պահանջում է բացատրութիւն:

Այսպիսի մեծատիրական եւ նեղմիտ մօտեցումը դժգոհութեան առիթ է տալիս եւ հասարակութեան մէջ երկփեղկածութիւն առաջացնում:

Առողջ դատողութիւնը պահանջում էր առանց գաղափարական խտրականութեան ներկայացւել ցանկը, նկատի ունենալով արժանատիներին: Այսպիսով ցոյց տուած կը լինէիք ժողովրդավարութեան իրական մի մնուշ, միասնականութեանը զօրավիզ կանգնող գեղեցիկ օրինակ:

15 հոգի «Մ. Մեսրոպ Մաշտոց»-ի շքանշան են ստացել, պէտք է ասել, որ դրանց մէջ կան արժանատիներ:

«Մ. Մեսրոպ Մաշտոց»-ի անունով շքանշանը բարձր մակարդակի ծառայութեան համար պէտք է շնորհւի: Այն երախտաշատի կործքը պէտք է զարդարի, որ մեծ ներդրում կատարած լինի մշակութային եւ կրթադաստիարակչական ասպարէզում իր յօդածներով, գրութիւններով, դասախօսական ելոյթներով, հետազօտութեամբ, ուսումնասիրութիւններով եւ հոգատար աշխատանքներով:

Ասում են՝ ծառը, որ առատ եւ քաղցր պտուղ է տալիս, ապացոյցն է պարտիզպանի ներութեանը:

Քննէք հայոց միջնակարգ աւարտած աշակերտի հայերէնագիտութեան մակարդակը, ցաւօք կը տեսնէք տարած աշխատանքի արդիւնքը: Ո՞ր են հասարակական եւ մշակութային աշխատանքների արգասիքը:

Քննադատելու հարցեր շատ կան, համոզուած ենք աշխատողը կը սխալի, սակայն շարունակ նոյն սղ-խալները կրկնում են եւ դրանցից դաս չենք առնում: ■

Ցաւակցական



Ի ցաւ մեզ, տեղեկացանք, որ կեանքից առյաւելտ հեռացել է իրանահայ հանրածանօթ բանաստեղծ - երգիծարան՝

ԾՅ Ս Յ ԷՅ (ԾՅ Ս Գ ԷՅ »Յ Կ):

«ԼՈՅՍ» երկշաբթաթերթի խմբագրական կազմը եւ գրական բաժինը իրենց ցաւակցութիւններն են յայտնում բոլոր մտաւորականներին եւ նրա անմիջական հարազատներին:

Շարքագրոյց՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀՐԱԿԻՐԻԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ Հետ

Հ. - Կը խնդրէինք ներկայանալ:

Պ.- Ես Արմենուի Մարտիրոսեանն եմ, մասնագիտութեամբ երաժշտագէտ եւ դաշնակահար, աշխատում եմ Երեսնի Կոմիտասի անուան պետական կոնսերւատորիայում, թատերական, եւ կինօարեստի ինստիտուտներում եւ «Ռոմանոս Մելիքեանի» անուան երաժշտական ուսումնարանում: 10 տարի է, ինչ աշխատում եմ նաեւ երեխաների հետ:

Նրանց հետ զբաղում եմ երաժշտութեամբ, գեղանկարչութեամբ, կերպարարեստով, եւ այս բոլորը իրականացնում եմ միաժամանակ: Այսինքն, իմ համոզումնքն այն է, որ բոլոր արեստները ունեն միեւնոյն սկզբնաղբիւրը: Իմ աշխատանքի 10 տարւայ արդիւնքը ցոյց է տուել, որ երեխաները շատ մեծ հաճոյքով են աշխատում եւ նրանց մօտ զարգանում է ստեղծագործական սկզբունքը: Սա իմ մեթոդն է, ես եմ մշակել այն, չնայած, որ օգտուել եմ Եւրոպայում հիմա գոյութիւն ունեցող ուրիշ շատ մեթոդներից, հիմնուել եմ դրանց վրայ: Բացի դրանից հիմա աշխարհում տարածում է գտել հետեւեալ մեթոդը, ըստ որի սիրտը բուժում են արեստի միջոցով: Ես էլ փորձում եմ դա կիրառել: Կան նաեւ երեխաներ, որոնք ունեն բարդոյթներ, հիւանդութիւններ, նրանք զբաղելով արեստով ազատում են իրենց բարդոյթներից, լեզական թերութիւններից, վախից եւ այլն: Հիմնական նպատակը երեխային ոչ թէ նագել կամ նկարել սովորեցնելն է, այլ



պարզապէս նրանց մէջ ստեղծագործելու հանդէպ սիրոյ արթնացումն է: Շատ հետաքրքիր է այստեղի երեխաների հետ աշխատելը, քանի որ տարբերութիւնները շատ են: Ինձ համար հետաքրքիր է, թէ ինչպիսին է նրանց աշխարհաընկալումը: Երեխաներ կան, որոնք որոշ պորբլեմներ ունեն , երեխաներ էլ կան, որոնք պարզապէս գալիս են հաճոյք ստանալու՝ նկարելու, երաժշտութեան հետ ծանօթանալու: Վերջում մենք նոյնիսկ որոշել ենք ցուցահանդէս կազմակերպել՝ ցուցադրելով 20-25 երեխաների աշխատանքները:



Հ. Որքանով են տարբերում երեխաների վերաբերեալ եղած նախնական պատկերացումները՝ իրականութիւնից:

Պ.- Որեւէ պատկերացում ունենալը ինձ համար դժար էր, չնայած որ երկրորդ անգամ եմ այցելել Իրան, բայց համեմայնողէպս առանձնայատկութիւնները պարզում են միայն դասերի ընթացքում: Աւելի շատ ես մտավախութիւն ունեի, սակայն առաջընթացը աւելի մեծ է, քան ես պատկերացնում էի: Իհարկէ կան պորբլեմներ, որոնք ինձ համար դժարութիւն են ստեղծում, յատկապէս «լեզուի» հարցը: Իսկ միւս խնդիրները հարթելի են:

Հ. Ուրիշ ի՞նչ խոչընդոտների էք հանդիպել Ձեր աշխատանքի ընթացքում:

Պ.- Որոշ չափով նկատում է դանդաղկոտութիւն: Իհարկէ շատ ցաւալի է նաեւ այն երեւոյթը, որը ինձ շատ է զարմացրել, երեխաները գոնէ նախնական տեղեկութիւններ չունեն: Դա պէտք է շտկուի:

Հ. Որեւէ խօսք, մաղթանք չունէ՞ք:

Պ.- Անպայման: Ես կը ցանկանայի շեշտել այն հանգամանքը, որ «Արարատ»-ում կան մարդիկ, որոնք անձուէր աշխատանք են տանում համայնքում, քանզի կողքից աւելի լաւ է երեսում: Օրինակ՝ տիկին Կիտուշը ողջ օրը նիարդային վիճակում է գտնում, ամէն բոլոր ծրագրատրում է եւ միշտ չէ, որ ստացում է: Սա ազգանրւէր գործ է եւ խրախուսելի :

* * *

Շարք.- Կը խնդրէինք ներկայանալ:

Պ.- Ջեմմա Մարտիրոսեանն եմ: Մօտ 35 տարի է դասախօս եմ թատերական եւ կինօարեստի ինստիտուտներում: Աշխատում եմ նաեւ Սոս Սարգսեանի հետ: Գոհ եմ ճակատագրից, քանզի ինձ բախտ է վիճակել աշխատել հանրայայտ ռեժիսորների հետ: Եւ կեանքի այս հնոցում ես դաստիարակել եմ, կոփել, տարբերել ճիշտը եւ սխալը: Բայց եւ այնպէս մեծ երկիւղ էի կրում աշխատանք սկսելու համար այս

Մշակոյթ

տարիքի երեխաների հետ, որովհետեւ ինչքան էլ վարժում ես մեծերին, որոնք անելի հասուն են, երե-խաների պարագայում հարցը տարբեր է: Երեխան գալիս է հում վիճակում եւ դու պէտք է զարգացնես նրա աշխարհաընկալումը, մշակես իր վերաբերմունքը դէպի հայ արւեստը, հայ մշակոյթը: Երբեմն գալիս են երեխաներ, որոնք արդէն ընտանիքում այս ուղ-ղութեամբ որոշ չափով յղկել են: Բայց ամէն դէպքում երե-խաների հետ աշխատանքը մեծ ջանքեր է պահանջում, ես սիրում եմ այդ աշխատանքը՝ երեխաների հետ շփումը:



Սա անհրաժեշտ է մանուսանդ այն երեխաներին, որոնք դեռ դպրոց չեն յաճախում: Այստեղ կան այն-պիսի երեխաներ, որոնք շատ բարդոյթներ ունեն, չեն կարողանում շփուել, ինքնամփոփ են եւ այլն: Սա գալիս է ընտանեկան վիճակից, դաստիարակութիւնից:

Իմ կարծիքով այն երեխան, որը ապրում է օտար երկրում, հոգեբանօրէն իրեն անելի ճնշած է գգում, քանզի ինքը այլ ազգից է եւ պարզապէս ապրում է տը-տալ երկրում: Բայց ունենալով իր սեփական ազգը, պէտք է հոգեբանօրէն պատրաստի՝ դառնալ հէնց իր ազգի գաւակը: Այս իմաստով շատ գովելի է մնան նախաձեռնութիւնը, սակայն կարծում եմ, որ երկու ամիսը շատ քիչ է, իհարկէ մենք ջանքեր չենք խնայում՝ մեր աշխատանքի մէջ: Մենք նրանց հետ հաւասար-ւելով՝ կարողանում ենք կապ ստեղծել, մտերմանալ, որպէսզի երեխան արտայայտի իր հոգու մէջ եղածը, ինչ է կատարում իր հետ, տանը ենթադրենք մայրը կամ հայրը զբաղած են, իսկ երեխան դուրս է մնում ուշադրութեան կենտրոնից, սակայն երեխան կարող է որեւէ խնդիր ունենալ: Օրինակ՝ մայրն ասում է, որ երեխան գիշերները վախի զգացում է ունենում: Եւ դասերի ընթացքում դա նկատում է նրա շարժման, երաժշտութեան ընկալման եւ, նկարչութեան մէջ: Նա նկարում է անելի դժար գոյներով, դժար է գտնում կենտրոնը, այսինքն՝ իր ներքինը դժար է արտայայ-տում: Սա նկատելով՝ այդ ուղղութեամբ սկսում ենք աշ-խատել: Երեխաներ կային, որ եկել էին այստեղ բոլորովին այլ բնատրութեամբ, իսկ հիմա լիովին փոխ-ւել է իրենց պահածքը, իրենց վարուելակերպը, նոյնիսկ շատ ցայտուն կերպով է դա նկատում: Դասերի ըն-թացքում աշխատում եմ նաեւ նրանց առողջանութեան վրայ, երեխաներ կան, որ ունեն առողջանական թերու-թիւններ, դժար են խօսում, այդ երեխաները յաճախ ունենում են ջղերի լարում, քանի որ նրա զգացմունքնե-րը առաջ են ընկնում՝ խօսքից:

Ը.- Իսկ ո՞ւմ կողմից էք իրաւիրել Թեհրան, այս նա-խաձեռնութիւնը իրականացնելու համար:


Պ.- Հրաւերը եղել է Հ.Մ.Ա.Կ.-ի «Արւեստից միու-թեան» կողմից, շատ լաւ մարդիկ են նրանք, գիտակ-ցելով այս անհրաժեշտութիւնը՝ ձեռնամուխ են եղել

մնան ծրագրի իրականացմանը: Յատկապէս չափա-զանց գնահատելի է տիկին Կիտուշ Արգուեանի վերա-բերմունքը՝ տրնաջան աշխատանքը:

Այս դասերի ընթացքում երեխան եւ արւեստով է զբաղում, եւ լեզուն է իւրացնում, եւ երաժշտութիւն լսել է սովորում, ծանօթանում է թէ՛ համաշխարհային երաժշտութեան եւ թէ՛ հայ երաժշտութեան հետ , ծա-նօթանում է նաեւ հայ ճարտարապետութեանը, մի խօսքով՝ ընդհանրապէս ծանօթանում է արւեստին: Եւ ես ուզում եմ շնորհակալութիւն յայտնել, քանզի մարդ-կանց գործը շատ մեծ էր համայնքի համար, էլ չեմ ասում, որ ազգի համար: Այսինքն բոլոր այն մարդիկ, որոնք լծւած են այս գործին, շահագրգռւած են իրենց համայնքի առողջութեան համար, սա մեծ ազգանէր գործ է:

Ը.- Իսկ աշխատանքի ընթացքում որեւէ խոչընդոտի չէ՞ք հանդիպել:

Պ.- Ոչ, խոչընդոտ չկայ: Միակ թերութիւնը որը երե-ւի կլիմայից է, դա դանդաղկոտութեան առկայութիւնն է: Բայց, ինչպէս արդէն ասացի, շատ մեծ գործ է համայնքի համար, եթէ իհարկէ այս գործը ունենայ եր-կար կեանք: Մենք Սրբազանի հետ էլ համդիպում ունե-ցանք, նա էլ համամիտ է մեզ հետ: Մի խօսքով, ինչպէս տեսնում էք, այս աշխատանքները մեծ կարեւորութիւն ունեն համայնքի մատաղ սերնդի դաստիարակութեան համար:



Ը.- Որեւէ մաղթանք կամ ցանկութիւն ունե՞ք:

Պ.- Ես կը ցանկանայի մեծագոյն սէրս յայտնել իմ ժողովրդին, որը ճակատագրի քերումով յայտնել է այս կամ մէկ այլ երկրում, որտեղ էլ ,որ լինեն՝ հայերը, ես նրանց բոլորին շատ եմ սիրում, պատրաստ եմ օգնել ինչով որ կարող եմ եւ մտրում եմ հայ ժողովուրդը յե-տագայում լաւ ճակատագրի արժանանայ, անելի քիչ տանջի եւ ամէն ինչ անելի յաջող ընթացք ունենայ, ցանկանում եմ, որ այդ տհաճ «սփիւռք» բառը բոլորիս ուղեղից դուրս գայ եւ մենք մի՛ պետութիւն, մի՛ հայրե-նիք ունենանք: Մենք բոլորս հայ ենք եւ ոչ թէ՛ պարս-կահայ, արաբահայ կամ այլ որակմամբ: Մենք պէտք է վերջապէս ազատ շունչ քաշենք՝ պատմութեան ընթաց-քում ունեցած դառը ճակատագրական հարածներից յետոյ: Սա է իմ մաղթանքը: ■

Երգագրոյցը վարեց՝ Անի Նազարեանը



ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Բուն անունով՝ Փանոս Վ. Վարդանեան, ծնել է 1933 թ. Բականիկի Իրանի «Բուրուարի» գաւառի «Ազնա» գիւղում:

Յետագայում ընտանիքով փոխադրոււմ է Թեհրան: Տարրական կրթութիւնը ստացել է ծննդավայրում, ապա միջնակարգը՝ Թեհրանում:

ԱՌԱՋԻՆ ՈՒՍՏ

Ուխտել էի ու զնացի ուխտատեղի,
Տեսայ ճամբան խաւար էր, լուս,
Երբ քայլեցի այդ մութ ճամբով
Տեսայ մարդիկ, ուխտադրուժ:

Անդարձ հոգով պայքար մտայ,
Որ խաւարը դարձնեն լուս,
Ու լոյս ճամբով զնամ ուխտի,
Քանզի ուխտն իմ կատարի...

Այդ պայքարի ճամբան լոյս էր,
Այնտեղ պահն էր ուրախութեան,
Թէ՛ ուխտատուր, թէ՛ պատմաբան
Հանգիստ անցնեն այդ լոյս ճամբան...

Ո՛վ ուխտատուր, հա՛յ ուղտատուր
Խոնարհութեամբ մտիր տաճար,
Անմեղ սրտով դու աղօթիր,-
Մէկ էլ ասա՛,- Ով իմ Աստուած՝
Հայոց ազգը ե՞րբ տուն կը գայ...

ԱՆՍՈՆՋ ԵՆՔ ՄԵՆՔ...

Անխոնջ ենք մենք ու աննկուն,
Հաստատական մեր պատմութեամբ,
Գրչի լոյսով մեր անվիաստ
Ընկել ենք մենք կռի դաշտ...
Անխոնջ ենք մենք եւ անայլայլ:
Մեր վաստակն է մեր հողն ու ջուր
Եւ վերածնունդ ազատութիւն
Գրչի զենքով պահենք նրան...

Պիտ սթափենք թուլութիւնից,
Ու պիտ դառնալ ուղեցոյցը նոր սերնդի
Գլխի ուժով պիտ ետ առնենք
Ինչ խլել են մեր պատերից...

Սհա, այսօր, ծեր ու ջահել
Հեռու-մօտիկ ընկերներով,
Գրչի լոյսով, գրչի լոյսով,
Միշտ քեզ հետ ենք Մայր Հայրենիք...

ԳԱԶԷԼ ՍԻՐՈՅ

Այս շաղախը ես եմ հունցել, ու միշտ կայ,
Սիրոյ մրմուռ ու մորմոքում, որ միշտ կայ,
Դռներն միշտ բաց են սիրոյ աշխարհում,
Սիրոյ դուռը դու երբ բացես՝ ողջոյն կայ...

Քո բաց սրտով թակիր դուռը ամենքի,
Ու կը տեսնես դուռ ու շէն քեզ ողջոյն տան,
Երբ շաղ չտաս սիրոյ սերմը աշխարհում
Քո փակ սրտին, ու քեզ էլ ո՞վ բարեւ տայ...

Մերը իր չէ, ու կեղծիքի առարկայ,
Նա մեղսիկ է՝ մարգարիտ աներկբայ,
Պաճուճանք է սիրոյ սրտի եւ հոգու
Ան ու ծախի առարկայ չէ, չարաշահ...

Սրտիս ասի, քեզնից ուրախ սիրտ չկայ,
Ասաց,- Ուրախ սրտերում էլ շատ վիշտ կայ,
Մէր է տւել իր վշտի հետ արցունքով,
Արցունքաշատ աչքերի մէջ շատ սեր կայ...

Ես ինձ ասի՝ միայն սերին հաւատայ,
Այս աշխարհում սերին սիրող դեռ շատ կայ,
Մերը ոչ «Հաճե՛գ»-ի զինու մէջ է՝ ոչ կնոջ
Տէրն է շաղել մարդու հոգում, հաւատայ:

ԻՄ ՇԱՒՍԵՐ

Թող աչքերը բարի նայեն,
Արարչագործ վեհ բնութեան,
Ուրախ տեսնեն բոլոր մարդկանց,
Խեղ չնայեն ուրիշներին...

Թող ձեռքերը չարիւնտունեն,
Ճիշտ դրածքին ու կեցածքին,
Թող որ կերտեն հոգու տաճար,
Պարզ աչքերով երկինք նայեն...

Թող ոտքերը այնպէս քայլեն,
Լոյս հաւատքի մեր մայրերում,
Ուր, անմեղների ոգիները
Պատարագուն, ննջեն յաւերժ...

Թող որ լեզուն չբարբաջի,
Փառաբանենք միայն մէկին...
Եւ այլ նրանց որ ունեն խիղճ
Հասկանում են իրար ընդմիշտ...

Թող հայեացքը բարի նայի,
Ուրախ ժպտայ, նա անկաշատ,
Ի կեցութեան ամբողջութեան
Եւ ընթանայ բնագոյրար...
Այս է կամքն իմ հաւատքի
Նրա մէջ եմ տեսնում ես ինձ... ■



Տեսակցութիւն

(Նւիրում է Արցախի անկախութեան համար զոհուած բոլոր ազատամարտիկների անմահ յիշատակին:)

Ռոբերտ Եսայեան

-Ճակատագիր

Երկու տարբեր՝ սեւ ու սպիտակ օրեր՝ նոյն աչքի մէջ, նոյն հողի վրայ, նոյն երկնքի տակ: Եւ այդ երկու տարբեր օրերը անասելի ուժով ինձ ձգում են դէպի իրենց շրջապատը, որի ալիքների մի մասը քրքրում է յիշողութիւնս, հանում է իմ մտքերից կապոյտ ժապաւեններ, փռում ճանապարհներին, միւս մասը սեղմում է ինձ, դարձնում վշտի կծիկ: Եւ այդ շրջապատից դուրս գալն արդէն անհնարին է դառնում:

Ակամայից մտաբերում եմ Քարինտակ գիւղի մասին իմ չնկարահանուած Ֆիլմի սցենարը, որը չորացած մի ծաղիկ է՝ յուշերիս գրքի մէջ դրած: Չորացած, բայց դեռես հին օրերով ու մտալիցումներով բուրոյ: Ըստ այդ սցենարի, պիտի կանգնէի գիւղի դիմացի դաշտում այնպէս, որ կադրում ընդգրկելը գիւղի տեսարանը, եւ արտաբերելի այս խօսքը. «Հեռից նայողը գիւղը նմանեցնում է զինուորի, որն այս հսկայ քարածայրը կրում է՝ որպէս վահան»:

Ինձ համար պարզ է հիմա, թէ այս պատկերը ինչ գծերով է մնացել կապուած կեանքին եւ ինչքան է հեռացել իրականութիւնից: Այս հսկայ քարածայրից հարեւան բուրբերը քարեր էին գլորում դէպի տները՝ փորձելով այդպէս ընկճել գիւղի բնակիչների աննկուն ոգին: Դրանով չբարարուելով, օրէցօր անելին էին կատարելագործում բարբարոսութեան եղանակները, պայթուցիկ նիւթեր ու սարքեր տեղադրելով մեքենայի անւորողների մէջ, գլորում էին ժայռից: Մի անգամ պայթուցիկ հարածն իր վրայ վերցրեց եկեղեցին, փրկելով գիւղը: Բարեբախտաբար, եկեղեցու բակում այդ պահին մարդ չկար. սովորաբար երեխաներն այստեղ խաղում էին մինչեւ ուշ գիշեր:

Գիւղի հին ճանապարհը, որ յոգնած հնձորի պէս հեւիհեւ բարձրանալով եւ քրտնած ճակատը սրբելով խտտերի թաշկիմակով, ջուր էր խմում Շուշիի ակունքներից ու յետոյ իջնում դէպի Ստեփանակերտ, հիմա ընկել է ... Չինորի՞ պէս, թէ՞ խաչի ...

Իսկ նոր ճանապարհը, որ թէեւ հնի համեմատութեամբ կրկնակի երկար է, իսկ անձրեւոտ ու ձիւնոտ օրերին՝ դժարանց, գիւղի բնակիչների համար դարձել է կեանքի ու գոյատեւման ճանապարհ: Այդ ճանապարհին ինձ առաջին անգամ է գիւղ տանում, այն էլ տխուր առիթով: Իմ աչքի առաջ անվերջ օրօրում է Էդարդ Յովսէփեանի դիակը: Այդպէս արիւնն է մղում դէպի սիրտը, մինչ սրտի մէջ ցուն է շարժում: Այդպէս թռչունն է ճախրում դէպի իր բոյնը, երբ բոյնը ... վտանգուած է:

Կանաչների վրայ
անշարժացած ավոյ՜

մորթած եղնիկի երազվո՜ւտ հայեացք ...
Տարիներ առաջ, երբ ես Քարինտակ գիւղն էի եկել՝ մասնակցելու բարեկամիս հարսանիքին, հաղորդակցել էի գիւղի ոգու մի այլ էջի հետ. դա ուրախամալու արեւսուն է, որ քարինտակցին կատարում է այնքա՜ն իւրայատուկ ու վարակիչ ձեւով:

...Երկու տարբեր՝ սեւ ու սպիտակ օրեր՝ նոյն աչքի մէջ, նոյն հողի վրայ, նոյն երկնքի տակ ...

Էդարդի դիակի վրայ սգացող հարազատների ձայնը կտրատում է օրայ շոգը, եւ նրա ճեղքերից զովութիւն չի թափում բակում եւ տանը վշտից կծկուած բարեկամների վրայ, այլ մաղում են կսկիծի ու ափսոսանքի ծաղկաթերթեր:

Ահա դազաղն իջեցնում են փոսի մէջ, դազաղի հետ՝ նաեւ հարազատների սրտերից պոկուած աղաղակ-կսկիծը:

Մարդիկ մի-մի բուռ հող են գցում դազաղի վրայ, որ բացածքը սպիանայ, մի-մի բուռ հող են գցում՝ ամէն պահ մտածելով, որ վերելի ժայռից յանկարծ կարող են կրակել: Ասումս իմ, էս ինչ անխիղճ դարի ենք հասել. մարդ չի կարողանում անգամ «մարդ թաղել մարդու մեման»: Մի-մի բուռ հող են գցում դազաղի վրայ եւ Ռուսաստանից ժամանած հիւրերը՝ ռուս գրողներն ու քրդ-թակիցները: Քարինտակ գիւղի բնակիչները երբէք չեն մոռանայ Ինեսա Բուրկովայի արցունքը, ռուս կնոջ արցունք-բողոքը ...

Էդարդ Յովսէփեան ազատամարտիկը հպարտ էր իր հողի պէս, իր հողի պէս կենսունակ էր ու շարժուն, լի երազներով, յամառ էր, ինչպէս իր հայրենի քարը, զուլայ, ինչպէս ջուրը ... Հպարտ էր: Դրա համար էլ գերադասեց ... սպանել, քան գերել, քան ենթարկել ստորացումների ...

«Ինչու՞ պիտի ես ճորտ լինեմ իմ հայրենի հողի վրայ: Ինչու՞ տանուէր չլինեմ իմ սեփական տանը: Ինչու՞ չընդվզեմ, երբ ապտակում են: Ինչու՞ չուղղեմ, երբ ծռում են ... Ինչու՞ ... Ինչու՞ ... Ինչու՞ ...»:

Ամէն օր այս հարցերն էր տալիս նա ինքն իրեն եւ իր ընկերներին, չգգալով, որ դառնում էր ինքն էլ մի անպատասխան ինչու, խրտելով ու անեւանալով ճակատագրի քառսի մէջ: ■

Ցաւակցական



Խոր կսկիծով եւ ամենայն դառնութեամբ յայտնում ենք, որ իր մահկանացուն է կնքել, թերթիս շատ մօտ բարեկամ, անձնէր հայրենասէր, մարդկութեան իրական տիպար՝

Ձ ՝ ՃՅԷ՝ Սձ՝ ԹՁ՝ ՍՍՅԷ՞՞՞ ՍՂ

«ԼՈՅՍ» երկշաբաթաթերթի խմբագրական կազմը եւ նրա բոլոր աշխատակիցներն իրենց խորագգաց ցաւակցութիւններն են յայտնում հայրենասէր համայնքին, նրա ընկերներին, եւ մանաւանդ անմիջական հարազատներին:

Կրթական

Լեւոն Օրբելու անվան համալսարանի հիմնադիր՝ Վ.Ա. Ջոհրաբեանը «Լոյս»-ի գրասենեակում



Վերջերս «Լոյս»-ի խմբագրատուն այցելեց Գրագրան քաղաքի՝ «Լեւոն Օրբելի»-ի համալսարանի հիմնադիր-տնօրէն, Ֆիզ-մաթ. գիտութիւնների դոկտոր՝ պրոֆ. Վարդան Ջոհրաբեանը (ի դէպ պրոֆ. Վ. Ջոհրաբեանը ծննդով իրանահայ է): Մեր մտերմիկ գրոյցից պարզւեց, որ յարգար-ժան տնօրէնին խիստ մտահոգել է սփիւռքահայ եւ մասնաւորապէս իրանահայ ուսանողների, մանաւանդ հայոց լեզուի ուսման անմխիթար վիճակը: Ելնելով այդ մտահոգութիւնից նա յայտ-նեց, որ ինքը պատրաստ է ամէն բան անելու՝ ի նպաստ այդ ազգանւէր գործի:

Մեր խնդրանքով նա մեզ տրամադրեց իր տնօրինած համալսարանի ուսանողներ ընդունելու պայմանները, որը ստորեւ ներկայացնում ենք ընթերցողներին:

Հիմնադրուել է 1996 թ., լիցենզիա N 60
Հիմնադիր՝ Վ. Ա. Ջոհրաբեան

ՈՒՅՏՈՐ՝ Վ. Ա. Ջոհրաբեան, Ֆիզ-մաթ. գիտութիւնների դոկտոր
ՊՐՈՖԵՍՈՐՍ-ԳԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԻՄՍ ԵՆ 6 ակադեմիկոս, 27 պրոֆեսոր, 36 դոցենտ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՉԵՒԵՐԸ՝ ցերեկային եւ անհատական ծրագրով
ԲՈՒՀԻ ՇՐՋԱՆԱԲՏՆԵՐԻՆ ՏՐԻՈՒՄ Է դիպլոմ
ՄԱՀՍԱՆԻՄՍ ԵՆ ՎԱՐՉԻ ՁԵՂՉԵՐ երկկողմանի ծնողագուրկ երեխաների եւ սոցիալական ծանր վիճակում գտնուող ընտանիքների երեխաների համար
ԿՐԹԱԹՈՒՐՈՒՄ Է ՄԱՀՍԱՆԻՄՍ գերազանցիկների համար
ԲՈՒՀՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ուսանողական խորհուրդ
ԲՈՒՀԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ, նախապատրաստական կուրսեր, տետրութիւնը՝ 6 ամիս, ուսման վարձը՝ 15000 դրամ

ՖԱԿՈՒՄԵՏ, (ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ)	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՆՆԵՐ (1998 թ.)
ՀԱՅՈՑ ԼԵԶԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ (լեզուաբան)	Հ.Լ.(գ.), Հ.Լ. եւ գր. (բ.), օտ.լ. (գ.)
ԺՈՒՐՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ (ժուրնալիստ)	Հ.Լ.(գ.), Հ.Լ. եւ գր. (բ.), օտ.լ. (գ.)
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ (պարսկերէն, արաբերէն, թուրքերէն, արեւելագէտ, քարգմանիչ)	Հ.Լ.(գ.), օտ.լ. (գ.), ՀԺՊ (գ.) կամ օտ.լ. (բ.)
ՌՈՍՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ (անգլերէն, Ֆրանսերէն, գերմաներէն, իսպաներէն)	Հ.Լ. (գ.), օտ.լ. (գ.), ՀԺՊ (գ.) կամ օտ.լ. (բ.)
ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ(իրաւաբան) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ (Ֆինանսներ եւ վարկ, արտադրութեան կառավարում, մենեջմենտ)	Հ.Լ. (գ.), օտ.լ. (գ.), ՀԺՊ (գ.) Մաթ. (գ.), Հ.Լ. (գ.), օտ.լ. (գ.)
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ (մանկավարժ եւ հոգեբան)	Հ.Լ. (գ.), Հ.Լ. եւ գր. (բ.), օտ.լ. (գ.)
ՏԱՐԲԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ(դասվար)	Հ.Լ. (գ.), Հ.Լ. եւ գր. (բ.), Մաթ. (գ.)
ՔԻՄԻԱՅԻ (դեղագործութիւն)	Քիմ. (բ.), Կենսաբ. (գ.), Հ.Լ. (գ.)
ԿԵՐՊԱՐԻԵՍԻ(մոդելաւորող-դիզայներ)	Նկարչ., Գծնկ., Հ.Լ. (գ.)
ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ (ատամնաբուժ)	Քիմ. (բ.) Կենսաբ.(գ.), Հ.Լ. (գ.)

* Ուսման տետրութիւնը բոլոր առարկաների համար 5 տարի է:

* Ուսման վարձը իրաքանչիւր արտասահմանցի ուսանողի համար տարեկան 331 ամերիկեան դոլար է սահմանել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

(Պատմական ակնարկ)

Համագումարի կենտրոնական հարցը ՀԽՍՀ Սահմանադրության (հիմնական օրենքի) ընդունումն էր: Այն առաջինն է հազարամեակների պատմություն ունեցող հայ ժողովրդի կեանքում:

Սահմանադրության համաձայն ՀԽՍՀ բարձրագույն իշխանությունը Հայաստանի բանորդների, գիտացիների և կարմիր զինուորների պատգամատրական խորհուրդների համագումարն էր, որը հրափրելու էր տարեկան մեկ անգամ: (Իրականում պարբերականության այս կարգը խախտեց): Հայաստանի առաջին Սահմանադրության գոյատևման շուրջ 15-ամեայ ընթացքում գումարել է խորհուրդների համահայաստանեան ութ (եօթ հերթական և մեկ արտահերթ) համագումար:

Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում գործում էր ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեն (75 անդամով), որը պատասխանատու էր հաշիւառու էր համագումարի առաջ: Միջհամագումարային ժամանակամիջոցում Կենտգործկոմը (ԽԳԿ) ՀԽՍՀ օրենսդիր, կարգադիր և ղեկավար վերահսկողական բարձրագույն իշխանությունն էր: Չորս ամիսը մեկ հրափրելու էր Կենտգործկոմի հերթական նստաշրջան: (Խախտել է նաեւ այս ժամկետը):

Կայացել է խորհուրդների առաջին գումարման Կենտգործկոմի երեք հերթական և մեկ արտահերթ նստաշրջան: Իսկ 1922թ. մարտի 11-12-ին Թիֆլիսում կայացած Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Կենտգործկոմների լիազոր-կոնֆերանսը դրեց Անդրկովկասեան դաշնության հիմքը, որոշելով կազմաւորել երեք հանրապետությունների միություն, հաստատեց դաշնային պայմանագիրը և ընտրեց Անդրկովկասի հանրապետությունների միության իշխանության գործադիր մարմին՝ դաշնային խորհուրդ:

Կենտգործկոմի յիշեալ նստաշրջանները որոշումներ են ընդունել սովի դէմ պայքարի, գիւղացիներին սերմացու մատակարարելու, Անդրկովկասեան դաշնության նախապատրաստման, Ժենովայի կոնֆերանսի, Կարսի պայմանագիրը վաւերացնելու, Զրեական օրենսգրքի հաստատման, հողօգտագործման կանոնների, ծխահարկերի մասին և այլն:

Խորհուրդների համահայաստանեան 2-րդ համագումարը կայացաւ 1922թ. նոյեմբեր-դեկտեմբերին: Համագումարը քննարկեց հանրապետության ներքին և միջազգային դրութեան, առանձին ժողովրդական կոմիսարիատների գործունեութեան հաշիւաւորութեան,

Անդրկովկասեան հանրապետութիւնների դաշնութեան և ԽՍՀՄի կազմաւորման մասին հարցերը: Վերջին հարցի կապակցութեամբ որոշեց ստորագրել համապատասխան պայմանագիրը, այն էլ կազմաւորել ԽՍՀՄը նոր Կենտգործկոմն ընտրեց անդամների (75) և թեկնածուների (43) կազմով:

Հայաստանի խորհուրդների 2-րդ գումարման Կենտգործկոմը ունեցել է 3 նստաշրջան: Վերջին նստաշրջանում հաստատել են հողային, քաղաքացիական և քրեական օրենսգրքերը և փոփոխութիւններ են մտցել հանրապետութեան վարչական կառուցւածքում:

1923թ. դեկտեմբերին կայացած Խորհուրդների 2-րդ համագումարը քննարկել է Հայաստանի կառավարութեան հաշիւաւորութիւնը, որոշումներ ընդունել գիւղատնտեսութեան ու հողաշինարարութեան, ֆինանսական դրութեան և կոոպերացիայի հարցերի մասին: Որոշում ընդունեց Սահմանադրութեան մեջ փոփոխութիւններ նախապատրաստելու մասին՝ կապւած Անդրկովկասեան դաշնութեան և ԽՍՀՄի կազմաւորման փաստի հետ:

Խորհուրդների 3-րդ գումարման Կենտգործկոմը ունեցաւ 3 նստաշրջան, հաստատեց մի շարք պետական հիմնարկութիւնների կանոնադրութիւնները, Անտառային օրենսգիրքը և այլն: Երրորդ համագումարի որոշմանը համաձայն համապատասխան փոփոխութիւններ կատարեց ՀԽՍՀ Սահմանադրութեան մեջ, դրանք համապատասխանեցնելով Անդրկովկասեան ֆեդերացիայի և ԽՍՀՄի սահմանադրութիւններին:

1925թ. մարտին կայացաւ խորհուրդների 4-րդ համագումարը, 330 պատգամաւորների մասնակցութեամբ: Համեստարար աւելացել էր անկուսակցական և գիւղացիական պատգամաւորների թիւը:

Համագումարի քննարկած հարցերը հիմնականում վերաբերում էին տնտեսութեան վերականգնման գործընթացին: Այդ նպատակով քննարկեցին հետեւեալ զեկուցումները. կառավարութեան հաշիւաւորութիւնը, Անդրկովկասեան դաշնութեան եռամեայ գործունեութիւնը, արդիւնաբերութեան, առեւտրի, գիւղատնտեսական զարգացման հեռանկարների, գիւղատնտեսութեան վարկաւորման, գիւղատնտեսական կոոպերացիայի խնդիրները: Հաւանութիւն տրեց Անդրդաշնութեան Սահմանադրութեան մեջ կատարւած փոփոխութիւններին: ■



Շար. 4

Առողջապահական



«Այրոց»-ը եւ նրա տեսակները

ԱՅՐՈՑ- Շատ մարդիկ տառապում են այրոցով, որը կարող է լինել որոշակի հիւանդութիւնների նշան (խոցային հիւանդութեան, կերակրափող-ստամոքս միացման փականքի անբարարարութեան եւ այլն), բայց հաճախում է նաեւ առողջ մարդկանց մօտ:

Մեղմ արտայայտուած այրոցը կարելի է կարգաւորել համապատասխան դիէտայով: Արգելուած են բոլոր տեսակի մսի, ձկան, թռչնի արգանակները, ապուրները, սեւ հացը, թարմ հացը, մեղրը, քաղցրաւենիքները, լոբելենը, բոլոր տապակած ուտելիքները (վերջինները պարունակում են վերտաքացւած ճարպեր): Առանձնապէս այրոցին նպաստում են համեմունքների (սեւ եւ կարմիր պղպեղ, ծիծակ, սխտոր եւ այլն), թթուներ եւ աղի ուտելիքի չափից աւելի կիրառումը, թունդ թէյը եւ սուրճը: Խորհուրդ է տրուում օգտագործել սպիտակուցներ (խաշած միս, ձուկ, թռչնի միս, ձու), կաթնամթերք (բացի մածուկից), կարագ, բրինձ, մակարոն, վերմիշել, մրգեր, բանջարեղէն: Պէտք է սնել յաճախ, քիչ-քիչ, հրաժարել ծխելուց, ալկոհոլի օգտագործումից: Այրոցի դէմ օգտագործող հիմքերը՝ (օրինակ՝ սոդայի լուծույթը) եւ հանքային ջրերը յաճախ խորացնում են երեւոյթը:

Այն դէպքում, երբ այրոցը պայմանաւորուած է ստամոքսի բարձր թթայնութեամբ, խորհուրդ ենք տալիս օգտագործել 100-150 գրամ հում կարտոֆիլի հիւթ: Անհրաժեշտ է յիշել, որ պէտք է խմել միայն թարմ պատրաստած հիւթը:

Որոշ դէպքերում այրոցը կարելի է մեղմացնել մի բաժակ կաթով կամ աւելի լաւ է՝ կաթնասերով, որոշակի դրական ազդեցութիւն կարող է գործել ոչ թթու խնձորը:

Այրոցով տառապողը պէտք է ուշադիր հետեւի, թէ որ սննդամթերքից եւ երբ է սկսում այրոցը, քանի որ այրոցը կարող է լինել, երբ ստամոքսաւիթի թթայնութիւնը նորմալից բարձր է, ցածր է, կամ նոյնիսկ նորմալի սահմաններում է, ուստի տարբեր մարդկանց մօտ արգելող սննդամթերքների ցանկը կարող է զգալիորէն տարբերել:

ԱՅՐԻԱՆՔ ԶԵՐՄԱՅԻՆ- Չեռքերի կամ ոտքերի այրածքի դէպքում անմիջապէս այրած մակերեսը դնել սառը, հոտող ջրի տակ եւ պահել այնքան, որ ջրից հանելիս զգացի միայն թեթեւ ցաւ:

Եթէ մարմնի այրած մասը հնարաւոր չի պահել հոտող ջրի տակ, այդ մակերեսին դնել սառույց կամ, ծայրահեղ դէպքում, սառը ջրով ջերմակ (գրելկա) կամ թրջոց: Առաջացած հեղուկով լի պարկիկները չվնասել եւ չծակել: Մաշկին քսել քսուքներ, որոնք պարունակում են հակաբորբոքային հորմոններ կամ ոչ ստերո-

իդային նիւթեր (ֆլուցինար, սինալար, սինաֆլան, գիոքսիզոն, օքսիկորո, ինդոմետասահինի քսուք):

Եթէ այրածքները խորն են կամ ընդարձակ, մինչեւ տուժածին հիւանդանոց հասցնելը խնցնել ցաւազրկող (անալգին, պենտալգին, ամիդոպիրին, փիլեմոլ եւ այլն), եթէ ցաւազրկողներ չկան՝ որոշ քանակութեամբ (20-50 գ) օդի կամ կոնեակ եւ մեծ քանակութեամբ տաք հեղուկներ (թէյ, սուրճ) շոկային վիճակից խուսափելու համար:

Տարածում գտած միջոցները (այրածքին ձէթ, մեղր, մածուն, ձի սպիտակուց, սոդա եւ այլն քսելը) անօգուտ են եւ յաճախ էլ՝ վնասակար:

Սկսած 2-րդ օրանից, այրած տեղերի վրայ կա-րելի է դնել նախապէս մաքրած եւ քերիչով քերած հում կարտոֆիլ կամ մառնիչի ու բամբակի կապը թրջել հում կարտոֆիլի թարմ հիւթով եւ դնել այրած տեղի վրայ:

Այրածքների դէպքում ժողովրդական բժշկութեան մէջ խորհուրդ է տրուում կիրառել հետեւեալ միջոցներից որեւէ մէկը՝

1. Լորենու նրբակեղեւի փոշին խառնել եւ դնել այրածի վրայ:
2. Խոնդատի չորացրած տերեւները եւ ծաղիկները փոշիացնել, խառնել ցանկացած ձէթի հետ եւ քսել այրածքին:
3. Կաղնու կեղեւը (40 գ) 10 րոպէ եռացնել 200 մլ ջրում, հովացնել, քսանել, օգտագործել թրջոցի ձեւով:
4. Կոստուկի արմատի փոշու 4 ճաշի գդալ եփել 4 բաժակ ջրի մէջ, մինչեւ հեղուկի քանճրանալը, այնուհետեւ վերջինիս 1 մասը խառնել 4 մաս կարագի հետ եւ օգտագործել որպէս քսուք:

Ճար. 1

ՏԻՐՈՒՆԻ

Լոյս երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- Նայիրի Յակոբեան
- Թելլօ Խուդաբաշխեան (Քալանթարեան)
- Մարգօ Տէր Սկրտչեան (Թամիաշեան)
- Միրանդա (Միմի) Թիմա (Եղիայեան)
- Արեգմագան Բեշիշեան (Իսմայիլեան)
- Վարդգէս Իսմայիլեան
- Հայկանուշ Գարախանեան (Շահմուրադեան)
- Մարտիրոս Սուրէնեան
- Մեծիկ Վառուանեան

Մարզական

Հարցազրույց Իրանի բասկետբոլի հաւաքականի անդամ՝ Հրաչ Թահմազեանի հետ



Հարց.- Միտելի Հրաչ, կը խնդրեմ ներկայանալ:

Պատասխան.- Հրաչ Թահմազեանն եմ, 18 տարեկան, ծնել եմ Քովեյթում, բասկետբոլը խաղացել եմ 12 տարեկանից: 14 տարեկանից խաղացել եմ «Սիփան» միութեան բասկետբոլի քիմում: Նախ իմ մարզիչն է եղել պարոն Էդիկ Թահմազեանը: Այնուհետեւ «Սիփան»-ում իմ մարզիչներն են եղել պրն. Հովիկ Շահմիրեանը եւ Մահմուդ Փուրշարաֆին: Այդ ընթացքում ընդգրկել եմ Թեհրանի նահանգի հաւաքականի անդամ եւ նոյն նահանգի դպրոցականների հաւաքականի անդամ: Յետոյ ընտրել եմ իրանական «Սեդա վա Սիմա» եւ «Շոմայլ շարդ» խմբերում: Իսկ հիմա երկու տարի է, որ խաղում եմ Իրանի Իսկական Հաւաքականի կազմի մէջ: Երբ ընդգրկել էի երկու վերոյիշեալ մարզակումբների քիմերի մէջ, իմ մարզիչն էր պրն. Մախդ Բոլբոլաբադին: Հաւաքականի կազմում մեկնել եմ Հունգարիա, իսկ Թեհրանի նահանգի կազմում՝ Մոսկա:

Հ.- Ինչո՞ւ ընտրեցիք բասկետբոլը:

Պ.- Տարեկիցներիս համեմատ աւելի բարձրահասակ էի, թերեւս դա էր հիմնական պատճառը, որ ես ընտրեցի բասկետբոլը: Ընկերներիցս շատերը ընտրեցին Ֆուտբոլը, բայց ես՝ բասկետբոլը եւ հիմա շատ ուրախ եմ, որ չեմ սխալւել:

Հ.- Ո՞վքեր են քեզ աջակցել յաջոցութեան հասնելու համար:

Պ.- Առաջին հերթին հայրս եւ մայրս, մանաւանդ հայրըս, որ ինքը մարզիկ է եղել: Ես շատ համեստ ձեռով էի մարզում, բայց պրն. Էդիկը ինձ խորհուրդ տուեց, որ մասնակցելով իրանական միս խմբերին, որ աւելի բարձր որակ են ներկայացնում՝ բարձրացնեմ իմ խաղատճը:

Հ.- Ներկայիս ո՞ր քիմում էք խաղում:

Պ.- Այս տարի ես ընդգրկւելով «Հոմա» քիմում՝ խաղում էի, թէ՛ երիտասարդների եւ թէ՛ մեծերի խմբերում:

Հ.- Այս տարի կը մասնակցե՞ք համահայկական խաղերին:

Պ.- Դժուարանում եմ ասել: Իսկ եթէ ժամանակս թոյլ տայ, «Սիփան» քիմի կազմում կը մասնակցեմ այդ խաղերին:

Հ.- Որո՞նք են ձեռքբերումներդ:

Պ.- Իմ ամենամեծ յաջոցութիւններից մէկը, Իրանի Հաւաքականում ընդգրկւելն է: Ես հրաւիրուցի եւ 120 հոգու միջից ընտրուցի: Եւ դա ինձ համար մեծ պատիւ էր: Ընտրուելուց յետոյ Հունգարիայում մենք եօթ անգամ մրրցեցինք տեղի խմբերի հետ: Այդ մրցոյթներից 5-ը շահեց մեր հաւաքականը: Բոլոր մրցոյթներում աշխատել եմ իմ ամբողջ կարողութիւնները կը գործ դնել:

Հ.- Ո՞ր գծում ես խաղում:

Պ.- Մեծ մասամբ յարձակողական գծում եմ խաղում:

Հ.- Ի՞նչ կարծիքի ես Իրանի բասկետբոլի մասին, արդեօք այն կարելի՞ է համեմատել աշխարհի զարգացած բասկետբոլի հետ:

Պ.- Այդ համեմատութիւնը ճիշտ չի լինի: Իրանի բասկետբոլը ճիշտ հիմքերի վրայ դրած չի եղել, բայց ի ուրախութիւն մեզ բոլորիս, պիտի ասել գնալով սխալները պակասում են եւ նկատելի առաջադիմութիւններ է ձեռք բերում:

Հ.- Ո՞վքեր են քո հաւանած բասկետբոլիստները:

Պ.- Հաւանած... Ինչպէս գիտեք աշխարհում լաւ բասկետբոլիստներ շատ կան, բայց առանձնացնելու դէպքում ես կը գերադասեմ Մայքլ Ջորդանին:

Հ.- Ի՞նչ սպասելիք ունես իրանահայ համայնքից:

Պ.- Ես անձամբ որեւէ սպասելիք չունեմ:

Հ.- Արդեօք չե՞ս ցանկանում աւելի լաւ մարզիչներ ունենալ:

Պ.- Մարզիչի դերն իհարկէ շատ կարեւոր է, բայց նախ մարզիկն է, որ պիտի ամբողջ կարողութիւնով լծի աշխատանքի: Ես առայժմ եղածով գոհ եմ:

Հ.- Ի՞նչ ծրագիր ունես ապագայի համար:

Պ.- Այս տարի ժամանակս գրեթէ ամբողջութեամբ յատկացրել եմ ուսման հարցին, եւ քիչ եմ զբաղւել մարզանքով: Յոյսով, որ կարողանամ համալսարան ընդունւել: Եթէ համալսարան ընդունեմ, աւելի շատ ժամանակ կունենամ բասկետբոլ խաղալու համար, որովհետեւ այն ժամանակ ուսման դժուարութիւն չեմ ունենայ:

Հ.- Ի՞նչ պատգամ ունես երիտասարդների համար:



Պ.- Իրենց ազատ ժամերն յատկացնեն մարզանքի, որպէսզի հեռու մնան մանաւանդ կործանիչ դէպքերից:

Հ.- Ի՞նչ կարծիքի ես քո խաղի մակարդակի մասին:

Պ.- Ես ինձ համահաւասար եմ համարում Իրանի հաւաքականի միս անդամներին, եւ ձգտում եմ զարգացնելով իմ խաղատճը՝ կանգնել լաւագոյնների շարքում:

Հ.- Կը ցանկանայի՞ր այլ երկրների յայտնի ակումբներում հանդէս գալ:

Պ.- Այո, իհարկէ: Եթէ առիթն ունենայի երոպական երկրներում խաղալու, որտեղ այս մարզածէն աւելի բարձր մակարդակի վրայ է, աւելի մեծ յաջողութիւնների կը հասնէի:

Հ.- Ո՞վքեր են Իրանի լաւագոյնները այս մարզածէում:

Պ.- Մոհսէն Մաղեղզաղէն, Հովիկ Շահմիրեանը եւ Թուրաջ Հէյդարին: Ի դէպ պրն. Մաղեղզաղէն ճանաչւել է Իրանի եւ «Ասիա» մայրցամաքի լաւագոյն «ցենտր»-ը:

Վերջում կը ցանկանայի յաջողութիւն մաղթել այն բոլոր մարզկանց, որոնք իրենց լուսնն են քերում իրանահայ մարզանքի զարգացման գործում: ■

*Հարցազրույցը վարեց
Արսիսէ Մինանեանը*

ՖՈՒՏԲՈԼԻ ԸՆԴՐԱԳԻՏԱՐԱՆ

ԱՍՏՏՐԵԱՆ ՅՈՎԱԵՓ (ծնւ. 1925թ.)- Կիսապաշտպան: Մպորտի վարպետ: Տեխնիկապէս լաւ պատրաստած Ֆուտբոլիստ, խաղի հմուտ կազմակերպիչ: 1949-50թթ. Երեւանի «Դինամոյի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 50 խաղ: ԽՍՀՄ զուտաթի 1945թ. խաղարկման եզրափակիչի մասնակից: Հայաստանի վաստակատու մարզիչ: Եղել է Երեւանի «Մպարտակի», «Արարատի» մարզիչ, Երեւանի «Նայիրի» ասագ մագիչ, կատարել է վարչական- կազմակերպչական աշխատանք:


ԱՍԻԱՅԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ
ՖԻՖԱ-ի անդամ: Ստեղծել է 1954թ.: ԱՍՖԿ-ի անդամ է 41 երկիր: Առաւել վաղ ազգային Ֆեդերացիա են հիմնադրել Ճապոնիան (1921), Իրանը (1922), Թայլանդը (1924), Իսրայէլը (1928): ԱՍՖԿ-ն անցկացնում է Ասիայի առաջնութիւններ, Ասիական խաղերի ծրագրով Ֆուտբոլի մրցաշարեր, ասիական երկրների չեմպիոնների զուտա խաղարկութիւններ եւ այլն:



ԱՐԱՆԵՍԵԱՆ ՌՈՒԴԻԿ (ծնւ. 1946թ.)- Աջ պաշտպան: Մպորտի վարպետ: Տեխնիկապէս լաւ պատրաստած, արագ կողմնորոշող Ֆուտբոլիստ, գրոհների եռանդուն մասնակից: 1967-72թթ. Երեւանի «Արարատի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 119 խաղ: ԽՍՀՄ առաջնութեան մեդալակիր (1971):

ԱԲԵՏԻՍԵԱՆ ԿԼՈՂ (1940թ.)- Պաշտպան: Մպորտի վարպետ: Ֆիզիքական կոփած, մարտունակ Ֆուտբոլիստ: 1963, 1966-67թթ. Երեւանի «Արարատի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 44 խաղ, խփել մէկ գոլ: ԽՍՀՄ առաջնութեան առաջին խմբի մրցաշարի յաղթող եւ փոքր ոսկէ մեդալակիր (1965):

ԱՄՍՏՐԻԱ- Ֆուտբոլի Ֆեդերացիան ստեղծել է 1904թ.: ՖԻՖԱ-ի անդամ է 1905-ից: Խոշորագոյն մարզադաշտը՝ «Պրատեր» (Վիեննա)՝ 90.000: Երկրում կայ 250.000 Ֆուտբոլիստ: Աստրիայի հաւաքականը (մարզագլխաւոր՝ սպիտակ մարզաշապիկ, սեւ վարտիք եւ զանգապաններ) աշխարհի 1954թ. առաջնութեան 3-րդ մրցանակակիր, 1936թ. օլիմպիական խաղերի 2-րդ մրցանակակիր: Աստրիական Ֆուտբոլին բնորոշ են ուժային պայքարը, արագութիւնը, զնդակի բազմաքայլ խաղարկումները:



Առաջատար ակումբներն են «Ռայլդըր», «Աուստրիան», «Ադմիրան»: Լաւագոյն խաղացողները՝ Սետաւ, Սիմոնլար, Բիկան, Բինդեր, (1006 գոլի հեղինակ), Հանապայ, Հապէլ, Ջեման, Կոլլեր, ՀոՖ, Բուցէկ, Պէցէլ, Պրոնիպա, Կրանկլ եւ ուրիշներ: Լաւագոյն մարզիչը՝ Ռապան: ■

Ադրիկ Յովհաննիսեանի յիշատակին

Ա. Մարգարեան

Ադրիկ Յովհաննիսեանը ծնւել է 1924 թւականին Թաւրիզում: Չորս զաւակներից նա եղել է կրտսերը: Չորրորդ Չայկ Յովհաննիսեանը, որը գորգի վաճառական էր, Իրանի «Սոցիալ-Դեմոկրատ» կուսակցութեան հիմնադիրներից է եղել, իսկ մայրը, որը ճանաչւած էր «Ազգային Մարօ» անունով զբաղւած էր ազգային աշխատանքներով:

Ադրիկ Յովհաննիսեանը ուսումը ստացել է Թաւրիզի «Շարիֆ» դպրոցում, յետոյ մեկնելով Աբադան՝ կարճ ժամանակով աշխատել է Աբադանի «Նաւթի ընկերութիւնում»:

1940-ական թւականներին իր հօր հասարակական աշխատանքների պատճառով նրանց ընտանիքը արքորւում է «Արաք» (Սուլթանաբադ) քաղաք եւ նա ստիպւած թողնում է աշխատանքը եւ վերադառնում ընտանիքի մօտ: Մի քանի տարի Արաքում ապրելուց յետոյ, նա գալիս է Թեհրան եւ որպէս հաշւապահ աշխատանքի է անցնում կօշիկի «Կաղապար» պատրաստող գործարանում՝ որը յետոյ նաեւ կաշի էր մատակարարում կօշկակարներին:

Ամուսնացել է 1962 թւականին, Ազատուհի Թորոսեանի հետ, նրանց զաւակներից երկուսը աղջիկ եւ մէկը տղայ է:

Ադրիկ Յովհաննիսեանը եղել է հայրենասէր ու ազգային-հասարակական գործիչ: Կարդալու մեծ սէր է ունեցել, ուստի եւ ժողովել ու կարդացել է հարիւրաւոր գրքեր:

Երիտասարդ տարիքից զբաղւել է ազգային-հասարակական եւ մշակութային գործերով: 1970-80 թւականներին աշխատանք է տարել «Ռոստոմ» դպրոցի սկաւտական բաժնի՝ ծնողական խորհրդում, նաեւ եղել է «Մարի Մանուկեան» դպրոցի ծնողական խորհրդի անդամ:

Ադրիկ Յովհաննիսեանը եղել է «Իրանահայ Ազգային եւ Մշակութային» միութեան հիմնադիր անդամներից, եւ մեծ սիրով ու եռանդով է մասնակցել միութեան աշխատանքներին:

Ադրիկ Յովհաննիսեանը իր մահկանացուն կնքեց 2000 թւականի սեպտեմբերի 2-ին, շրջապատւած իր ընտանիքով:

Նա միշտ կը յիշի իր ընտանիքի եւ ընկերների կողմից, որպէս բարեսիրտ, ազատասէր եւ հայրենասէր մարդ:

Ցաւակցական

Ամենայն դառնութեամբ տեղեկացանք, որ վաղաժամ կեանքից ընդմիշտ հեռացել է, մեր շատ սիրելի՝

Արգին Բանդարին

Մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում նրա մահը սքողներին, մանաւանդ նրա անմիջական հարազատներին:

ԽՆԿՆՈՒՄԵԱՆ ԸՆՏԱՆՈՒԿ



ՍԵՊՏԵՄԲԵՐ

Նոյնութեամբ գալիս է լատիներեն september ամսանունից, անլի երկար` september mensis «սեպտեմբեր ամիս»: Անգլերեն September, ֆրանսերեն septembre, գերմաներեն September:

Լատիներեն ամսանունները գալիս է septem «եօթ» բառից: Ուրեմն *սեպտեմբեր* ստուգաբանորեն նշանակում է «եօթերորդ»:

Բայց չէ՞ որ սեպտեմբերը իններորդ ամիսն է:

Դ-ա, իհարկե՛, այդպէս է, սակայն միայն այսօրայ տեսակետից: Իսկ եթէ նկատի ունենանք, որ մինչեւ Յուլիոս Կեսարը հռոմէացիների տարւայ առաջին ամիսը մարտն էր, արդէն հաշիւը ճիշտ կը գայ:

Այս ամսանունից սկսած՝ հռոմէացիների մէջ արդէն մի նոր օրինաչափութիւն է նկատուում. եթէ մինչ այդ նըրանք իրենց ամիսները կոչում էին աստուած-աստուածուհիների կամ կայսրերի անուններով, ապա սեպտեմբերից մինչեւ վերջ նրանց ամիսները մնացին... անանուն: Դ-րանք համարակալւեցին եւ վերջ: Իհարկե՛, միշտ առաջինը հաշուելով մարտ ամիսը:

Եթէ ուզում էք իմանալ, օգոստոս ամիսն էլ նոյն հռոմէացիների կողմից, մինչեւ Օգոստոս կայսրը, համարակալւած էր, կոչում էր sextilis «վեցերորդ», Կեսարից առաջ յուլիսը՝ quintilis «հինգերորդ»: ■



Հումոր

- ⇒ Տուրիստները դիմում են անտառապահին.
 - Այս բացատում կարելի՞ է խարոյկ վառել:
 - Ոչ, խստիւ արգելւում է,-պատասխանում է անտառապահը:
 - Բայց այստեղ խարոյկի հետքեր են երեւում, ո՞վ է վառել:
 - Նա, ով ինձ չի հարցրել:

- ⇒ Ընկերուհիները զրուցում են.
 - Դու ինչպիսի՞ ամուսին կուզենայիր ունենալ, շիկահե՛ր թէ քիսահե՛ր:
 - Շիկահեր, որովհետև մեր տան կահոյքը ոսկեգոյն է:

- ⇒ Փոքրիկ տղային քնեցնելու նպատակով, հայրը պառկեցնում է նրան և սկսում զանազան հեքիաթներ պատմել:

Մի քանի ժամ անց երեխայի մայրը կամաց բաց է անում ննջասենեակի դուռը և հարցնում.

 - Քնե՞ց:
 - Այո, մայրիկ,- պատասխանում է փոքրիկ տղան:

Ասացածքներ

- * Արագ են քայլում, ասում են՝ ծուռ է, կամաց են քայլում ասում են՝ կոյր է:
- * Բամբաստողը ընկոյզի տոպրակ է, ինչքան շարժես ձայն կը հանի:

ԱՖորիզմ

- * Մարդը միայն մէկ բռնակալ ունի՝ ազիտութիւնը: **Վ. Շիգո**
- * Արդարութեան չափանիշ չի կարող լինել ձայների մեծամասնութիւնը: **Ֆ. Չիլեր**
- * Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրել չի կարող: **Ջ. Բայրոն**



Հանելուկ

Շուրթիդ վրայ՝
Ծուխ ու բոց,
Մրախիդ վրայ
Թոյն ու խոց

տս ոլմ ոլ օ

Թիկունք

Մարմնի հետնակողմը անանում են թիկունք, մէջք կամ քեռի:
Թիկունքը կատարում է մարմնի ցանկութիւնները և նրանից ստանում յարգանք, պատիւ, քծնանք:
Երբ թիկունքը կորցնում է պաշտօնը, մարմինն իսկոյն մոռանում է նրան և կաշում ուրիշ թիկունքի:

Ամենամեծ նկարչութիւնը



Ամենամեծ նկարչութիւնը Պոլ Ֆիլիպոտոյի «Գիթսորոգ կուի» կտան է, որն ունի 125 մ. երկարութիւն և 12,1 մ. լայնութիւն, այսինքն՝ 10 անգամ մեծ է թենիսի դաշտից: Այն նկարելու համար անհրաժեշտ է եղել 2,5 տարի և աւարտել է 1883 թականին:



Երիտասարդի համար



(ÜöÇñáõÜ »Ü Ø³ ñáĬÉ áóë³ óãñ
ĬÇΒ³ ì ³ ĬÇÝ)

Ընկեր Յակոբը՝ հայերեցի մեր նոր ուսուցիչը, քանի գնում այնքան ատելի է մեզ դուր գալիս: Իսկ սկզբում քիաց տարօրինակ ու խեղճ: Ես շատ էի վախենում, որ մեր երեսառածները անմիջապես կօգուտեն դրանից ու գլխին կը նստեն: Այսպիսի դեպքերում ես տառապում եմ, ասես ինձ են ձեռն առնում... չեմ հասկանում թե դրա ի՞նչն է ծիծաղելի:



Առաջին փորձաքարը զցեց Աշոտը.

-Գրականությունը, լա՛ւ, հասկացանք. էլ քերականությունն ինչնեղիս է պետք... ատելորդ գլխացալանք:

Ես լարեցի... հիմա սա էլ, ընկեր Ռիմայի նման, Աշոտին կանամի ապուշ կամ յիմար ու կուղարկի ծնողների հետևից: Մակայն ընկեր Յակոբը մի պահ լռեց, մտածկոտ մայեց պատուհանից դուրս, յետոյ լուռ մօտեցաւ գրատախտակին ու սկսեց գրել.

«Կփարար տոռը ջպեղօրեն կփարեց բոժորիկ տոռիկին. տոռիկն զարցրագայն ծնգծնգաց»:

Մենք տարակուսած մայում էինք մերք գրատախտակին, մերք միմեանց. պեպենոտ Հրանտը մատը դրեց իր քունքին և ոլորեց այսինքն նոր ուսուցչի գլխում ամեն ինչ կարգին չէ: Աղջիկները քթի տակ փոթկացին, իսկ Հրանտը առիթը յարմար համարելով, ընդգծած՝ բարձր ու անճոռնի ձայնով սուտ փռշտաց, դա նրա սովորական «արամտությունն» է, ատելիին ընդունակ չէ:

Ընկ. Յակոբն այս անգամ էլ անսովոր վարեց. նա ոչ գոռգոռաց, ոչ էլ բարկացաւ: Հանգիստ շրջեց մեր կողմը և դիմելով Աշոտին ասաց.

-Այս տղան միանգամայն տեղին հարց բարձրացրեց. ի՞նչ է տալիս մեզ քերականությունը: Ես պարտաւոր եմ և կաշխատեն բացատրել... Մակայն մինչ այդ կը խնդրեն քեզ,- նա մատնացոյց արեց Հրանտին,- ազատել դասարանը և «մրսած» չզալ դպրոց ու փռշտալով վարակել միւսներին:

Նա այդ արտասանեց շատ հանգիստ, մի փոքր տխուր տոնով: Դա էլ անսովոր էր:

Հրանտը անմիջապես խեղճացաւ, փորձեք թախանձել և խոստովներ տալ, որ այլեւս երբէք չի անի, սակայն ընկ. Յակոբը ընտեստեց նրան.

-Չեմ կասկածում, որ այլեւս չես անի. քանզի հասկացար, որ դա անպատիժ չի անցնի: Իսկ քեզ նմանները «քաջեն կտրում», երբ համոզուած են, որ չեն պատրժի: Այժմ դու պատրաստ ես նստանալ և դա ատելի տօղէլ է, քան քո մախորդ անշնորհքությունը: Բնատրութեան այդ գծերով դժար թէ երբևէ յարգանքի արժանանաս: Խորհիր այդ մասին:

Հրանտը գլխիկոր դուրս եկաւ, և մենք հասկացանք, որ ընկ. Յակոբի անվրդով տոնը շատ ատելի լուրջ է, քան ուրիշների գոռգոռոցը:

-Ես դիտատրեալ ընտրեցի միանգամայն անիմաստ բառեր:- Ընկ. Յակոբը կրկին մօտեցաւ գրատախտակին:

-Դրանք դուք չէք գտնի ոչ մի բառարանում: Մակայն, եթէ ուշադիր կարդաք գրածս, ապա կը համաձայնեք, որ դա քերականօրեն ճիշտ կազմուած հայերէն մախարասութիւն է: Իրօք, նրա մէջ կայ ենթակամ՝ «կփարար տոռը, ստորոգեալը՝ «կփարեց» և այլն: Վերջապէս ամենակարևորը. թէպետև մենք չենք հասկանում ոչ մի բառ, մախարասութիւնը, շնորհիւ զուտ քերականական կանոնների, պարունակում է բաւական հարուստ տեղեկութիւններ: Իրօք, դժար չէ կռահել, որ վատ բնատրութեամբ ինչ որ արարած՝ «կփարար տոռը», հաւանաբար ցաւ է պատճառել նոյն տեսակի փոքրիկ արարածին՝ «բոժորիկ տոռիկին»: Վերջինս ինչ որ ձեռով բողբոջել է:

-Չարցրագայն ծնգծնգաց,- ասաց Աշոտը,- այսինքնը, բարձրաձայն կնճկնճաց:

-Շատ լաւ է, որ դու առաջարկեցի իմաստատրեալ մնամտութիւն: Եկէք ամբողջն իմաստատրենք:

- Խեթկան այծը,- առաջարկեցի ես...
 - Կամ կծան շունը,- ընդհատեց Աշոտը:
- Բայց ես շարունակեցի իմ օրինակը՝
- Ուժգին պոզահարեց...
 - Սիրունիկ ուլիկին,- բացականչեց Յասմիկը:
 - Ուլիկը աղեկտուր մկկաց,- ասացի ես:
 - Բոթոթը բարձրաձայն կնճկնճաց,- աւարտեց Աշոտը:

Երկու օրինակն էլ յաջող են,- ասաց ընկեր Յակոբը: Դրանց թիւը կարելի է ատելացնել, սակայն դա կը շեղի մեզ քննարկուող հարցի բուն էութիւնից: Եկէք ամփոփենք մեր քննարկումն այսպէս. քերականությունը կապակցում է բառերն այնպէս, որ նրանց միջև որոշակի յարաբերութիւններ հաստատուն. դրա շնորհիւ հնարատր է դառնում ինչ-որ միտք արտայայտել...Ես համոզեցի՞ քեզ,- ընկ. Յակոբը դարձաւ Աշոտին:

- Այո,-համաձայնեց Աշոտը,-շատ հետաքրքիր էր:
- Շնորհակալութիւն,- ժպտաց ընկ. Յակոբը, իսկ Աշոտը շփոթեց:

Աշոտը ճիշտ էր. մենք չէինք էլ պատկերացնում, որ քերականությունը կարող է այդքան կարևոր ու հետաքրքիր լինել: Այս դասից յետոյ դասարանում նոր խաղ սկսեց. անիմաստ բառերից կազմում էինք մախարասութիւններ և առաջարկում խաղընկերոջը կռահել իմաստը: Ես փորձեցի տատիկին այդպիսի մախարասութիւն-հանելուկ առաջարկել.

- Էս ինչերէն ա՞,- հարցրեց տատիկը:
- Հայերէն, տատի:

-Մի սրան տես,- անմիջապէս բորբոքեց տատին,- ինձ ինչի՞ տեղ ես դրել: ■

Շար. 1